



ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀԱՂՈՐԴՈՒՄ

2026 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2026 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

- 1.1 Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրի կիրառում
- 1.2 Բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններ
- 1.3 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում ստացված նվերների հաշվառման գործընթացի կազմակերպումը
- 1.4 Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարումը

2. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

- 2.1 Հայտարարագրերի ռեեստրի վարում
- 2.2 Աջակցություն հայտարարատուներին
- 2.3 Ներկայացված հայտարարագրեր
- 2.4 Հայտարարագրված տվյալների փոփոխություններ

3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- 3.1 Հայտարարագրերի ստուգում
- 3.2 Հայտարարագրերի վերլուծություն
- 3.3 Օրենսդրական փոփոխություններ և նախաձեռնություններ

4. ԿՈՒՍԱԿԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

- 4.1 Օրենսդրական փոփոխություններ և նախաձեռնություններ
- 4.2 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտ
- 4.3 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում
- 4.4 Կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունների հրապարակում և ներկայացում
- 4.5 Նախընտրական քարոզարշավի ընթացքում կուսակցությունների բանկային հաշիվների վերաբերյալ ամփոփ տեղեկանքների նախապատրաստում և հրապարակում

5. ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

- 5.1 Բարեվարքության եզրակացությունների և դրանց հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկություններ
- 5.2 Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքներ
- 5.3 Օրենսդրական փոփոխություններ

6. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ

7. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

8. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ

8.1 Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերը և
համագործակցային շրջանակը

8.2 Հանրային իրազեկվածության բարձրացմանն ուղղված ծրագրերը,
հաղորդակցություն

9. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՈՒՄ

10. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում բարեվարքության համակարգի տարրերի (անհամատեղելիության պահանջներ, շահերի բախում, վարքագծի կանոններ, նվերների ընդունման սահմանափակումներ, այլ սահմանափակումներ) առնչությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) իրականացվել է ընդհանուր թվով 130 ուսումնասիրություն: Իրականացված ուսումնասիրությունների արդյունքներով հինգ դեպքում Հանձնաժողովը հարուցել է վարույթ: Չորս դեպքում վարույթ հարուցվել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների, մեկ դեպքում՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով: Ընդ որում, երեք դեպքում վարույթի հարուցման հիմք են հանդիսացել լրատվամիջոցների հրապարակումները, երկու դեպքում՝ քաղաքացիներից ստացված դիմումները:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ուսումնասիրությունների թիվը առերևույթ չի փոխվել: Հաշվետու ժամանակաշրջանում նկատվել են բարեվարքության տարրերի հետ կապված հետևյալ հիմնական միտումները՝

➤ շահերի բախման առնչությամբ հարկ է նկատել, որ նախորդող տարում ձևավորված միտումն, ընդհանուր առմամբ, պահպանվել է, մասնավորապես, շահերի բախման հնարավոր իրավիճակներում պաշտոնատար անձինք նախքան որոշման կայացումը կամ գործողության կատարումը դիմել են Հանձնաժողով՝ հայցելով շահերի բախման իրավիճակի լուծմանն ուղղված Հանձնաժողովի առաջարկը: Նման դիմումների գերակշիռ մասը ստացվել է համայնքային քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից:

➤ վարքագծի կանոնների առնչությամբ հարկ է նկատել, որ հաշվետու ժամանակաշրջանում Հանձնաժողովի կողմից իրականացված ուսումնասիրությունները հիմնականում առնչվել են նախընտրական շրջանում պաշտոնատար անձանց կողմից ենթադրյալ ոչ բարեկիրթ կամ ոչ հարգալիր վարքագիծ դրսևորելուն, մասնավորապես՝ քաղաքական հակառակորդների, քաղաքացիների, ինչպես նաև լրագրողների նկատմամբ ենթադրյալ վիրավորական կամ այլ ոչ հարգալիր արտահայտություններ ու ոչ խոսքային վարքագիծ դրսևորելուն,

➤ նվերների ընդունման սահմանափակումների առնչությամբ հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ աճել է նվերների հաշվառման գործընթացի հետ կապված դիմումների և գրությունների թիվը: Դրանք մեծամասամբ վերաբերել են նվերների գնորոշմանը, ինչպես նաև առկա իրավակարգավորումների պարզաբանմանը: Հարկ է նկատել, որ չնայած նվերների հաշվառման ռեեստրի

կառուցման առկա մարտահրավերներին՝ հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից մշակված էլեկտրոնային ձևաթղթերի լրացման և ներկայացման միջոցով իրականացվել է պաշտոնատար անձանց կողմից ստացված նվերների հաշվառումը: Հաշվառված նվերների թիվը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը շուրջ 30-ով:

1.1 Պետական պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի կիրառում

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովին վերապահված է պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագիրքը (այսուհետ՝ Կանոնագիրք) ընդունելու լիազորություն:

Սույն լիազորության շրջանակներում Հանձնաժողովը մշակել և 2024 թվականի փետրվարի 6-ին ընդունել է Կանոնագիրքը, որն ուժի մեջ է մտել 2024 թվականի ապրիլի 1-ից: Կանոնագիրքը հասանելի է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ հայերեն և անգլերեն տարբերակներով, ինչպես նաև իրավական տեղեկատվական [arlis](#) համակարգում:

Նկատի ունենալով 2026 թվականի հունիսի 7-ին Ազգային ժողովի հերթական ընտրությունների անցկացման հանգամանքը՝ Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում հաստատել է նախընտրական շրջանում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց խոսքի իրավաչափության գնահատման չափանիշներ: Մասնավորապես, հիմք ընդունելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ նախընտրական շրջանում կարծիքի արտահայտման ազատության սահմաններն առավել լայն են, ինչը պետք է կիրառելի լինի նաև Հանձնաժողովի կողմից նախընտրական շրջանում Վարքագծի կանոնագրքի կիրառման նկատմամբ: Հանձնաժողովի սահմանած չափանիշները հաշվի են առնում ենթադրյալ խախտում թույլ տված պաշտոնյայի գործածած արտահայտությունների բովանդակությունը և ձևը, խոսքի հասցեատերերի անձը և ենթադրյալ խախտմանն անմիջապես նախորդած շրջանում նրանց վարքագիծը, այն հանգամանքը՝ արդյոք խոսքը կատարվել է քաղաքական բանավեճի շրջանակներում, խոսքի նպատակը (արդյոք այն ունեցել է միայն վիրավորելու, թե առաջին հերթին կամ նաև քննադատելու նպատակ) և այլն:

Ընդ որում, հարկ է նկատել, որ Հանձնաժողովը վարքագծի կանոնների մեկնաբանման տեսանկյունից «նախընտրական շրջան» հասկացությունը չի պայմանավորել «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով նախատեսված նախընտրական քարոզչության ժամանակահատվածով, այլ արձանագրել է, որ նախընտրական շրջանի մեկնարկը պետք է պայմանավորվի յուրաքանչյուր դեպքում՝ կախված ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և թեկնածուների կողմից ակտիվ քարոզչական գործունեության իրականացման մեկնարկով: Հանձնաժողովն, ըստ այդմ, արձանագրել է, որ Ազգային ժողովի 2026 թվականի հունիսի 7-ին կայանալիք հերթական ընտրությունների պարագայում Հանձնաժողովը նախընտրական շրջանի մեկնարկ է համարում Ազգային ժողովի ընտրություններ նշանակելու մասին Հանրապետության նախագահի հրամանագիրն ուժի մեջ մտնելու օրը, այն է՝ 2026 թվականի փետրվարի 7-ը:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն իրականացրել է վարքագծի կանոնների ենթադրյալ խախտումների վերաբերյալ 30 ուսումնասիրություն, որոնցից 18-ը՝ դիմումների և գրությունների, 8-ը՝ մեղիա հրապարակումների, 4-ը՝ հարցումների հիման վրա: Ի համեմատություն սրա՝ 2025 թվականի առաջին կիսամյակի ընթացքում Հանձնաժողովն իրականացրել էր 20 ուսումնասիրություն՝ 11 դիմումի, 7 հրապարակման, 1 դիմումի և հրապարակման, 1 մեղիայի և այլ վարույթի ընթացքում ի հայտ եկած հանգամանքների հիման վրա, իսկ երկրորդ կիսամյակի ընթացքում՝ 22 ուսումնասիրություն՝ 12 դիմումի, 9 հրապարակման և 1 դիմումի ու հրապարակման հիման վրա:

Հարկ է նկատել, որ հաշվետու ժամանակահատվածում դիմումների և մեղիա հրապարակումների հիման վրա իրականացված 24 ուսումնասիրություններից 18-ն առնչվել է նախընտրական շրջանում պաշտոնատար անձի կողմից բարեկրթության և հարգալիրության սկզբունքի ներքո ներառված կանոնների ենթադրյալ խախտումների (Վարքագծի կանոնագրքի 36-37-րդ կետեր):

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովին ներկայացված դիմումների և մեղիա հրապարակումների ուսումնասիրության արդյունքում հարուցվել է վարքագծի կանոնների առերևույթ խախտումների վերաբերյալ 4 վարույթ (որոնցից մեկը՝ համատեղ՝ դիմումի և հրապարակման հիման վրա), իսկ 10 դիմումի հիման վրա ընդունվել է վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում՝ պայմանավորված առերևույթ խախտման բացակայությամբ կամ Կանոնագրքի սուբյեկտների շարքից պաշտոնատար անձանց դուրս լինելու հանգամանքով: Դիմումներից մեկը վերադարձվել է, մեկ դիմումի հիման վրա որոշում չի ընդունվել՝ ելնելով քվեարկության արդյունքներից, իսկ ևս երկու դիմումի հիման վրա իրականացված ուսումնասիրության արդյունքում դիմողին գրությամբ պարզաբանվել է վարույթի հարուցման հիմքերի բացակայության մասին: Մեղիա հրապարակումների

հիման վրա իրականացված 5 ուսումնասիրության արդյունքում վարույթներ չեն հարուցվել, որոնցից 4-ը՝ պայմանավորված վարքագծի կանոնների առերևույթ խախտման բացակայությամբ, իսկ 1-ը՝ պայմանավորված այն հանգամանքով, որ առերևույթ խախտումը կատարած պաշտոնատար անձն ուսումնասիրությունն իրականացնելու պահին ներողություն էր խնդրել խախտման համար, ինչի արդյունքում, ըստ էության, Հանձնաժողովի կողմից իրականացվելիք վարույթն առարկայագուրկ կլիներ:

Հաշվետու ժամանակահատվածում հարուցվել է ևս 2 վարույթ՝ նախորդ կիսամյակի ընթացքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:

Հաշվետու ժամանակահատվածում հարուցված բոլոր 6 վարույթներն առնչվել են քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն ընդունել է վարքագծի կանոնի խախտման առկայության մասին 1 եզրակացություն՝ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի ղեկավարի վերաբերյալ, որը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://cpcarmenia.am/wp-content/uploads/2026/06/%D4%B5%D5%A6%D6%80%D5%A1%D5%AF%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6-%D4%B4%D5%A1%D5%BE%D5%AB%D5%A9-%D5%8D%D5%A1%D6%80%D5%A3%D5%BD%D5%B5%D5%A1%D5%B6.pdf>:

Հաշվետու ժամանակահատվածում հարուցված մնացած վարույթները գտնվում են ընթացքի մեջ: Դրանցից 2-ը կասեցվել է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ նույն դեպքի առթիվ առկա է նախաձեռնված քրեական վարույթ:

Հարկ է նկատել, որ հաշվետու ժամանակաշրջանում շարունակական են եղել վարքագծի կանոնների համակարգի միասնականության ապահովման տեսանկյունից նախկինում արձանագրված մարտահրավերները, մասնավորապես՝ համայնքի ավագանու անդամների, համայնքային վարչական և հայեցողական պաշտոններ զբաղեցնող անձանց և Ազգային ժողովի պատգամավորների վարքագծի կանոնների բացակայությունը:


Պաշտոնատար անձանց նշված խմբերի համար վարքականոնների սահմանմամբ հնարավոր կլինի ամբողջացնել վարքագծի կանոնների միասնական համակարգը և ապահովել բոլոր սուբյեկտների կողմից վարքագծի կանոնների խախտումների համակողմանի և արդյունավետ քննությունը:

Հարկ է հավելել, որ 2026 թվականի հունիսին շրջանառվել է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքի նախագիծը, որով առաջարկվում են պատգամավորական էթիկայի հանձնաժողովի ձևավորման, գործունեության հետ

կապված կարգավորումներ: Չնայած սույն նախագծով նախատեսվող կարգավորումների՝ գուգահեռաբար չեն նախաձեռնվել «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» օրենքի փոփոխություններ, ինչպես նաև չի շրջանառվել պատգամավորների վարքականոնների նախագիծ, ինչի պայմաններում շարունակում է չկարգավորված մնալ պատգամավորների վարքագծի կանոնների սահմանման անհրաժեշտության հարցը:


1.2 Բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ իրականացված ուսումնասիրություններ

Հանձնաժողովը 2026 թվականի առաջին կիսամյակում շարունակել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման, վարքագծի կանոնների խախտումների վերաբերյալ դիմումների և մեղիա հրապարակումների ուսումնասիրությունը և պարզաբանումների տրամադրումը: Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել է ընդհանուր թվով **101** դիմում և գրություն: Ուսումնասիրված մեղիա հրապարակումների ընդհանուր թիվը կազմել է **16**: Եվս 1 դեպքում ուսումնասիրության համար հիմք են հանդիսացել Հանձնաժողովում իրականացվող այլ գործընթացների արդյունքում վերհանված վերաբերելի տվյալները: Նշված ժամանակահատվածում տրվել է նաև Հանձնաժողովի գործառույթների առնչությամբ ստացված 12 հարցման պատասխան:



Հաշվետու ժամանակահատվածում քաղաքացիներից և հանրային իշխանության մարմիններից ստացված դիմումների և գրությունների հիման վրա իրականացված թվով 101 ուսումնասիրությունից 20-ը վերաբերել են անհամատեղելիության պահանջներին, 42-ը՝ շահերի բախման իրավիճակներին, 18-ը՝ վարքագծի կանոններին, 19-ը՝ նվերների ընդունման սահմանափակումներին, ևս 2 դիմում՝ Հանձնաժողովի գործունեությանն առնչվող այլ հարցերի: Ընդ որում, շահերի բախման իրավիճակների վերաբերյալ ներկայացված 25 դիմումներով դիմումատուները հայցել են Հանձնաժողովի՝ իրավիճակի լուծմանն ուղղված առաջարկությունը:


Դիմումների և գրությունների հիման վրա իրականացված ուսումնասիրություններ



Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրված մեղիա հրապարակումներ

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրված՝ զանգվածային լրատվության միջոցների 16 հրապարակումներից 8-ը վերաբերել են վարքագծի կանոններին, 4-ը՝ շահերի բախման իրավիճակներին և 4-ը՝ անհամատեղելիության պահանջներին:

**Բարեվարքության համակարգի տարրերի վերաբերյալ մեդիա
հրապարակումների ուսումնասիրություններ**



Շահերի բախման վերաբերյալ

Շահերի բախման վերաբերյալ հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է թվով 4 ուսումնասիրություն, որից 3-ի դեպքում Հանձնաժողովի կողմից վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթի հարուցման հիմքեր չեն արձանագրվել, մեկ ուսումնասիրություն դեռևս ընթացքի մեջ է:

1. «Աշտարակի ավագանու անդամի ղեկավարած ընկերությունը 966 մլն դրամի պայմանագրեր է կնքել համայնքի հետ», <https://hetq.am/hy/article/178972>, «Hetq.am» լրատվական կայք, 12 հունվարի, 2026 թ.:

Հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության համաձայն՝ Աշտարակի համայնքապետարանը 2025 թվականին 45 մլն 756 հազար դրամի և 185 մլն 400 հազար դրամի գնման երկու պայմանագիր է կնքել «Ավանգարդ շին» և «Էկո սիթի գրուպ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի հետ: Ընկերությունների 40%-ը պատկանում է Աշտարակ համայնքի ավագանու անդամ Արա Բաղդասարյանի կնոջը՝ Մերի Խաչատրյանին, իսկ Արա Բաղդասարյանը «Ավանգարդ շին» ՍՊ ընկերության տնօրենն է: Մինչ 2025 թվականը «Ավանգարդ շին» և «Էկո սիթի գրուպ» ընկերությունների կոնսորցիումը Աշտարակի համայնքապետարանի հետ կնքել է մեկ պայմանագիր՝ 240 մլն դրամի, ևս երկու պայմանագիր՝ 495 մլն դրամի, համայնքապետարանի հետ կնքել է «Ավանգարդ շին» ՍՊ ընկերությունը:

Հրապարակման հիման վրա Հանձնաժողովն իրականացրել է համալիր ուսումնասիրություն՝ քննարկված բոլոր դրվագներով: Հանձնաժողովը հրապարակման առարկան ուսումնասիրել է իրականացված գնումների ընթացակարգերի և համայնքի ղեկավարի շահերի բախման կարգավորումների համատեքստում:

Հանձնաժողովը 2025 թվականի հունիսի 18-ին իրականացրել էր ուսումնասիրություն մեկ այլ՝ «Infocom.am» լրատվական կայքի՝ «Աշտարակ համայնքը վերջին 3 տարում շուրջ 735 մլն դրամի գնում է կատարել ավագանու անդամի ընկերությունից» վերտառությամբ [հրապարակման](#) հիման վրա, որի շրջանակներում անդրադարձ է կատարվել համայնքապետարանի և «Ավանգարդ շին» և «Էկո սիթի գրուպ» ՍՊ ընկերությունների կոնսորցիումի միջև 2022 թվականի սեպտեմբերի 28-ին կնքված՝ ՀՀԱՄԱՇՏ-ՀԲՄԱՇՁԲ-22/4, 2023 թվականի հունիսի 9-ին կնքված՝ ՀՀԱՄԱՇՏ-ՀԲՄԱՇՁԲ-23/4, 2024 թվականի սեպտեմբերի 26-ին կնքված՝ ՀՀԱՄԱՇՏ-ՀԲՄԱՇՁԲ-24/5 ծածկագրերով պայմանագրերին: Ուսումնասիրության արդյունքում Հանձնաժողովը 2025 թվականի հուլիսի 9-ին կայացրել է Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին ՎԻՎ/167/2025 որոշումը, իսկ 2025 թվականի հուլիսի 29-ին կայացրած՝ ՎԻՎ/167/2025 որոշմամբ Հանձնաժողովը Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանի նկատմամբ որոշել է կիրառել վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով: Որոշման շրջանակներում արձանագրվել է, որ Թովմաս Շահվերդյանը, առանց Հանձնաժողով հայտարարություն ներկայացնելու, որպես պատվիրատուի ղեկավար, իր լիազորությունների շրջանակում համայնքի կարիքների համար գնման պայմանագիր է կնքել «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով իր հետ փոխկապակցված անձի հետ գործնական հարաբերություններ ունեցող անձի՝ «Ավանգարդ Շին» ՍՊ ընկերության հետ, որի գործադիր մարմնի ղեկավարը հանդիսանում է նույն համայնքի ավագանու նույն կուսակցության անդամ Արա Բաղդասարյանը: Ընկերության հետ կնքված այլ պայմանագրերի առնչությամբ Հանձնաժողովը որոշել է վարույթ չհարուցել՝ հաշվի առնելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենքի 37-րդ հոդվածի 7-րդ կետը՝ 169.31-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում: Քննարկված վարույթի հիմքում չի դրվել համայնքապետարանի և «Ավանգարդ շին» ՍՊ ընկերության միջև 2025 թվականի հունիսի 20-ին կնքված՝ ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/3-2 ծածկագրով պայմանագիրը՝ հաշվի առնելով, որ ուսումնասիրության ժամանակահատվածում գնումների էլեկտրոնային համակարգում պայմանագիրը դեռևս հրապարակված չի եղել:

Միաժամանակ, Հետք լրատվական կայքի սույն հրապարակման ուսումնասիրության շրջանակներում ՀՀԱՄԱՇՏ-ԳՀԱՇՁԲ-25/3-2 ծածկագրով գնման գործընթացին վերաբերելի փաստաթղթերի և տեղեկությունների ուսումնասիրությամբ Հանձնաժողովի կողմից գնումների մասին օրենսդրությամբ սահմանված պահանջների առերևույթ խախտումներ չեն արձանագրվել: Ինչ վերաբերում է պայմանագրի կնքման համատեքստում շահերի բախման վերաբերյալ հայտարարություն չներկայացնելուն, Հանձնաժողովը որոշել է վարույթ չնախաձեռնել՝ նկատի ունենալով, որ սույն գնմանը հաջորդած՝ «Ավանգարդ Շին» ՍՊ և «ԷԿՈ ՄԻԹԻ ԳԴՈՒՊ» ՍՊ ընկերությունների և Աշտարակի համայնքապետարանի միջև 2025 թվականի սեպտեմբերի 15-ին կնքված՝ ՀՀԱՄԱՇՏ-ՀԲՄԱՇՁԲ-25/1 ծածկագրով գնման գործընթացի շրջանակներում Թ. Շահվերդյանը օրենքով սահմանված կարգով դիմել է Հանձնաժողով՝ շահերի բախման իրավիճակի լուծման վերաբերյալ առաջարկ ստանալու նպատակով, ինչի շրջանակներում Հանձնաժողովը, հիմք ընդունելով օրենքի համապատասխան կարգավորումները, համայնքի ղեկավարին առաջարկել է նախքան պայմանագրերի կնքումը հանդես գալ շահերի բախմանը վերաբերող հանգամանքների մասին գրավոր հայտարարությամբ՝ հրապարակելով այն համայնքապետարանի կայքէջում: Համայնքի ղեկավարի կողմից նշված հայտարարությունը ներկայացվել է նաև Հանձնաժողով:

2. «53,4 միլիոն հարկային արտոնություն, 25 միլիոն դրամաշնորհ՝ նախարարի ամուսնուն», hraparak.am/am/post/a2757bffd4da26c7e481918301e38b05,
«Hraparak.am» լրատվական կայք, մարտի 28, 2026 թ.:

Ըստ հրապարակման՝ Առողջապահության նախարարությունում պետական պատվերների մեծամասնությունն իրականացվում է նախարար Անահիտ Ավանեսյանի մորը պատկանող «Արֆարմացիա» ՓԲ ընկերության միջոցով: Վերջին մեկ տարվա ընթացքում սույն ընկերության հետ ավելի քան 83 միլիոն դրամի պայմանագիր է կնքվել: Բացի դրանից՝ նախարարն օգնում է իր ամուսնուն պատկանող ընկերություններին արտոնյալ դիրք ունենալ շուկայում, օրինակ՝ սարքավորումների մատակարարման շրջանակներում 53,4 միլիոն դրամի չափով հարկային արտոնությունների և պետության կողմից ավելի քան 25 միլիոն դրամ դրամաշնորհների ստացման հարցում:

Հանձնաժողովը 2021-2026 թվականներին լրատվամիջոցների այլ հրապարակումների և դիմումների հիման վրա պարբերաբար իրականացրել է ուսումնասիրություններ՝ Անահիտ Ավանեսյանի շահերի բախման համատեքստում: Իրականացված ուսումնասիրությունները, ի թիվս այլնի, վերաբերել են Առողջապահության նախարարության կազմակերպած գնման գործընթացներին «Արֆարմացիա» ՓԲ ընկերության մասնակցության և դրանց արդյունքներով վերջինիս

հետ գնման պայմանագրեր կնքմանը, ինչպես նաև Անահիտ Ավանեսյանի ամուսնու բաժնեմասնակցությամբ «Իբարի» ՍՊ ընկերությանը Կառավարության կողմից ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնություն տրամադրմանը: Անդրադառնալով իրականացված գնման գործընթացներին՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ պետական կառավարման մարմնում, այդ թվում՝ Առողջապահության նախարարությունում, նախարարը, ի պաշտոնե, չի հանդիսանում գնման գործընթացում ներգրավված անձ կամ պայմանագրի կողմ, ինչպես նաև չի ձևավորում գնահատող հանձնաժողով կամ այլ կերպ չի մասնակցում գնման գործընթացի կազմակերպմանը: Առողջապահության նախարարության անունից գնման պայմանագրերը բոլոր դեպքերում կնքվել են գլխավոր քարտուղարի կողմից: Հետևաբար, նախարարին փոխկապակցված ընկերության՝ Առողջապահության նախարարության կարիքների համար պատվիրվող գնման գործընթացներին մասնակցության առումով նախարարի կողմից շահերի առերևույթ դեպք (իրավիճակ) առկա չէ:

Հարկ է նշել, որ 2026 թվականի մայիսին Ազգային Ժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ ընդունվել է գնումների գործընթացում շահերի բախման իրավիճակների կառավարման և փոխկապակցված առևտրային կազմակերպությունների մասնակցության դեպքերը սահմանափակող «Գնումների մասին» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, որով, ի թիվս այլնի, նախատեսվել են սահմանափակումներ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց հետ փոխկապակցված կազմակերպությունների՝ գնման գործընթացներին մասնակցության վերաբերյալ:

Միաժամանակ, հրապարակման երկրորդ դրվագի առնչությամբ արձանագրվել է, որ նախարարի ամուսնու բաժնեմասնակցությամբ «Իբարի» ՍՊ ընկերությանը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնություն տրամադրվել է Կառավարության 2022 թվականի մարտի 24-ի N 362-Ա որոշմամբ: Արտոնություն տրամադրելու պայմանները և ընթացակարգը սահմանված են Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1118-Ն որոշմամբ, որն ունի համընդհանուր կիրառելիություն, անդրադառնում է անձանց (կազմակերպությունների) լայն շրջանակի վրա, չի կրում մասնավոր բնույթ, ինչը բացառում է մասնավոր շահի առկայությունը: Ընդ որում, հայտը ընդունում, դրա համապատասխանությունը որոշման պայմաններին ստուգում և համապատասխան որոշման նախագիծը պատրաստում ու Կառավարության հաստատման է ներկայացնում ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը: Թեև Անահիտ Ավանեսյանը, որպես Կառավարության անդամ, մասնակցել է «Իբարի» ՍՊ ընկերությանը արտոնություն տրամադրելու մասին համապատասխան որոշման ընդունմանը, այնուամենայնիվ, այդ որոշմամբ հաստատվել է ընկերության հայտը: Արտոնության տրամադրման փաստացի հիմք է

հանդիսացել Կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 17-ի N 1118-Ն որոշումը, որի շրջանակներում Կառավարության կողմից գերակա ճանաչված ոլորտներում գործունեության իրականացնող և որոշմամբ հաստատված կարգի պահանջներին բավարարող տարբեր ընկերություններ ստացել են արտոնություն: Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կառավարության խնդրո առարկա նիստին նախարարի մասնակցությունը և քվեարկությունը, Հանձնաժողովի գնահատմամբ, չի հանգեցրել շահերի բախման առերևույթ իրավիճակի առաջացման:

3. «Անշարժ գույք զբոսայգու դիմաց. ՔՊ-ականների, Էդուարդ Բաբայանի և արտոնյալ գործարարի կայք», <https://hetq.am/hy/article/180005>, «Hetq.am» լրատվական կայք, մարտի 4, 2026 թ.:

Համաձայն հրապարակման մեջ շրջանառվող տեղեկատվության՝ Աբովյան քաղաքում և Առինջ գյուղում բազմաբնակարան շենքեր կառուցող «Միլոն մայնինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն այդ շենքերի զբաղեցրած հողամասերից մեկը ձեռք է բերել Առինջ համայնքից՝ շուկայականից բազմապատիկ ցածր գնով: Բացի դրանից, Առինջ համայնքի ավագանու որոշման հիման վրա Ընկերության միակ մասնակից Բաբկեն Հովակիմյանի մորը՝ Յողիկ Համբարձումյանին, որպես վարձակալի (Ավագանու որոշման մեջ բացակայել են հողամասի՝ նախկինում վարձակալված լինելու մասին որևէ փաստական տվյալ), օտարվել են տարբեր նշանակության հողամասերը, որոնց մի մասը հետագայում սեփականության իրավունքով փոխանցվել է Ընկերությանը: Բացի դրանից, Բաբկեն Հովակիմյանը Աբովյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի մայր Լյուբա Բաբայանից ձեռք է բերել հողամաս (Աբովյանի նախկին զբոսայգու տարածք, որը տարիներ առաջ համայնքի կողմից օտարվել է Էդուարդ Բաբայանի ընտանիքի անդամներին՝ մորը և կնոջը): Աբովյանի համայնքապետ Էդուարդ Բաբայանը հետագայում նշված հողամասում բազմաբնակարան բնակելի համալիր կառուցելու շինթույլտվություն է տրամադրել Ընկերությանը: Միաժամանակ, Լյուբա Բաբայանը, Ընկերության կառուցած շենքերից ձեռք է բերել բնակելի և հասարակական նշանակության տարածքներ:

Համաձայն հրապարակման՝ Ընկերությունը շինարարության թույլտվությունները, փորձաքննությունները և կարևոր այլ փաստաթղթերը ստացել է «դուրացված» կարգով: Միաժամանակ, Ընկերության կառուցած շենքերում շահեկան պայմաններով բնակելի և հասարակական տարածքներ են ձեռք բերել որոշումների կայացման մեջ ներգրավված անձինք (այդ թվում՝ Կոտայքի փոխարգպետ Հայկ Մկրտչյանը, Աբովյանի համայնքապետ Էդուարդ Բաբայանը, Աբովյանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ, «Միլոն մայնինգ» ՍՊԸ-ի փոխտնօրեն Նաիրի Հակոբյանը և այլն) ու նրանց մերձավորները:

Հարկ է նշել, որ «Հետք» լրատվական կայքը հրապարակման նյութն ուղարկել է ՀՀ գլխավոր դատախազություն: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից քրեական վարույթ չի նախաձեռնվել, քանի որ հաղորդմամբ արձանագրված իրադարձություններին վերաբերելի փաստական տվյալները չեն հաղթահարել քրեական վարույթի նախաձեռնման համար անհրաժեշտ նվազագույն իրավական շեմը»:

Հրապարակված տեղեկատվությունը Հանձնաժողովն ուսումնասիրել է համայնքի ղեկավարի շահերի բախման համատեքստում: Ըստ այդմ, ուսումնասիրվել են Համայնքապետարանի և Կոտայքի մարզպետարանի պաշտոնական կայքէջերում տեղադրված՝ վերաբերելի որոշումները, ինչպես նաև Հանձնաժողովի հայտարարագրման էլեկտրոնային համակարգում առկա տվյալները:

Էդուարդ Բաբայանը, իր ընտանիքի անդամներին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման (հետագայում նաև՝ նպատակային նշանակության փոփոխման և միասնական հասցեի տրամադրման) ժամանակահատվածում չի զբաղեցրել Աբովյան համայնքի ղեկավարի պաշտոնը, հետևաբար, իր հետ փոխկապակցված անձանց մասով որոշումներ չի կայացրել:

Հանձնաժողովը Էդուարդ Բաբայանի և Բաբկեն Հովակիմյանի ու Ընկերության միջև «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 11-րդ մասի իմաստով փոխկապակցվածություն չի արձանագրել: Չնայած Էդուարդ Բաբայանի մայրը (փոխկապակցված անձ)՝ Լյուբա Բաբայանը, Ընկերության տնօրեն Բաբկեն Հովակիմյանի և Ընկերության հետ կնքել է առուվաճառքի մի շարք պայմանագրեր, որոնք կողմերի համար հանգեցրել են օգուտների ստացման, այնուամենայնիվ, դրանցից ծագող հարաբերությունները Հանձնաժողովը չի դիտարկել որպես գործարար հարաբերություններ, քանի որ, անկախ գործարքների քանակից, դրանք յուրաքանչյուր դեպքում կրել են մեկանգամյա բնույթ և կողմերի համար պարբերական պարտավորությունների կատարում չեն ենթադրել: Հետևաբար, այս դեպքում ևս փոխկապակցվածություն առկա չէր:

Ինչ վերաբերում է Ընկերությունից արտոնյալ պայմաններով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելուն, ապա ուսումնասիրությամբ պարզվել է, որ, օրինակ, Կոտայքի փոխարգպետ Հայկ Մկրտչյանը Ընկերությունից բնակարան ձեռք է բերել տվյալ պահին Ընկերության կողմից առաջարկվող արժեքով: Աբովյան համայնքի ավագանու անդամ Նաիրի Հակոբյանը, չնայած բնակելի տուն է ձեռք բերել Ընկերության կողմից հրապարակային առաջարկվող գնից ցածր գնով, այնուամենայնիվ, Ընկերությունը գրեթե նույն արժեքով նույնանման բնակելի տներ վաճառել է նաև այլ անձանց: Համաձայն Ընկերության գրության, անհրաժեշտության դեպքում, կախված գործարքի ծավալից, կառուցապատման փուլից (թե կառուցապատման որ փուլում է գնորդը ձեռք բերում բնակարանը) և գործարքի այլ առանձնահատկություններից, Ընկերությունը

կիրառել է զեղչ»: Հարկ է նշել, որ Նաիրի Հակոբյանը նաև Ընկերության փոխտնօրենն էր և Բաբկեն Հովակիմյանի հետ ուներ ընկերական հարաբերություններ:

Շինարարության թույլտվությունները տրամադրվել են Կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված՝ «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգ»-ով սահմանված ժամկետների պահպանմամբ: Մեկ դեպքում մեկ օբյեկտի շահագործման թույլտվությունը տրամադրվել է դիմումի ներկայացման օրը:

Արմվյան համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի գործողություններում կամ որոշումներում շահերի բախման առերևույթ իրավիճակի առկայության արձանագրման համար էական է անձանց միջև օրենքի իմաստով փոխկապակցվածության արձանագրումը, ինչը հրապարակման և կատարված ուսումնասիրության արդյունքներով հնարավոր չէր հաստատել: Միաժամանակ, ձեռք բերված տեղեկությունները բավարար չեն հիմնավորելու Ընկերության վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում համայնքի ղեկավարի՝ Է. Բաբայանի, մասնավոր շահի առկայությունը և որոշումների կայացման գործընթացի նկատմամբ դրա հնարավոր ազդեցությունը: Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովն ավարտել է ուսումնասիրությունը:

Հաշվետու ժամանակահատվածում մեղիա մոնիթորինգի շրջանակներում վեր հանված՝ շահերի բախմանը վերաբերող՝ «Hetq.am» լրատվական կայքի՝ «Առուշ Առուշանյանի ազգականը 312 մլն դրամի պայմանագիր է կնքել Գորիսի համայնքապետարանի հետ» վերտառությամբ հրապարակումը գտնվում է ուսումնասիրության փուլում: Հրապարակմամբ շրջանառվող տեղեկատվությունը վերաբերում է Գորիս համայնքի կարիքների համար համայնքային գնումների կազմակերպման գործընթացին:

Վարքագծի կանոնների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է վարքագծի կանոնների վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա թվով 8 ուսումնասիրություն, որոնցից երեքի արդյունքներով վարքագծի կանոնի առերևույթ խախտման հիմքով Հանձնաժողովը հարուցել է համապատասխան վարույթ:

1. «Շատ եք լոճվում, ձեր լայնքը հեսա կնեղացնենք. լարված իրավիճակ՝ Երևանի ավազանու նիստում», <https://oragir.news/hy/material/2025/12/23/180641>, «oragir.news» լրատվական կայք, դեկտեմբերի 23, 2025 թ.:

Հրապարակման համաձայն՝ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը Երևան քաղաքի ավագանու նիստի ընթացքում վիճաբանություն է ունեցել ավագանու անդամների հետ:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Հանձնաժողովի՝ 2024 թվականի փետրվարի 6-ի N 02-Ն որոշման հավելվածով հաստատված՝ Պետական պաշտոն զբաղեցնող անձանց (բացառությամբ պատգամավորի, դատավորի, Բարձրագույն դատական խորհրդի անդամի, դատախազի, քննիչի), համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Վարքագծի կանոնագիրք) 36-րդ և 37-րդ կետերի համատեքստում, որոնցով սահմանվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց՝ բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն ցուցաբերելու, անձանց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունները:

Հանձնաժողովն արձանագրել է, որ Տ. Ավինյանն իր խոսքը կատարել է որպես նիստը վարող՝ արձագանքելով ու նկատողություն անելով նիստի բնականոն ընթացքն ընդհատած ավագանու անդամներին: Նշվածը հաշվի առնելով՝ Տ. Ավինյանի խոսքի և կատարած առանձին արտահայտությունների բովանդակության վերլուծությամբ Հանձնաժողովը գտել է, որ Տ. Ավինյանի խոսքը նպատակ է ունեցել քննադատելու նիստի բնականոն ընթացքն ընդհատած ավագանու անդամներին և գնահատական տալու նրանց վարքագծին, ինչպես նաև վերականգնելու նիստի բնականոն ընթացքը: Հանձնաժողովը կարևորել է, որ Տ. Ավինյանի հինչեցրած գնահատականները վերաբերել են ավագանու անդամների վարքագծին և ոչ թե անձին, և եզրակացրել է, որ դրանք առաջին հերթին կրել են նիստը վարողի իրավասություններն իրականացնելու և ավագանու անդամների վարքագիծը քննադատելու և ոչ թե նրանց վիրավորելու նպատակ: Հանձնաժողովը նաև հաշվի է առել այն հանգամանքը, որ Տ. Ավինյանի ամբողջ խոսքի ընթացքում ավագանու անդամները շարունակել են վիճել նրա հետ:

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է, որ նշված հրապարակմամբ ներկայացված վարքագիծը չի պարունակել վարքագծի կանոնների առերևույթ խախտման հատկանիշներ, և որոշել է դրա առթիվ չհարուցել վարույթ:

2.«Սափեյանը խոչընդոտել է «Նոնօրհներթի» կարգը. հոգևորականներն ու հավատացյալները դուրս են եկել եկեղեցուց», <https://news.am/arm/news/923337.html>, «News.am» լրատվական կայք, հունվարի 1, 2026 թ.:

Հրապարակման համաձայն՝ Թալին համայնքի ղեկավար Տավրոս Սափեյանը Թալինի Սուրբ Աստվածածին եկեղեցում խոչընդոտել է «Նոնօրհներթի» կարգը,

հայտնել, որ Սուրբ Ծննդյան և Աստվածահայտնության տոնին նվիրված պատարագին իր անձը պետք է ներկայացվի՝ որպես Թալինի Սուրբ Աստվածածին եկեղեցու խաչքավոր և պնդել, որ պատարագի ժամանակ պետք է գեղչվի Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունը:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Վարքագծի կանոնագրքի 45-րդ կետի համատեքստում, որի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը, ի պաշտոնե հանդես գալիս, պարտավոր է գերծ մնալ այլ անձանց (այդ թվում՝ իր հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող) մտքի, կրոնի, խղճի ազատության իրավունքին ոտնձգող գործողություններ կատարելուց, այդ թվում՝ այս կամ այն կրոնի դավանանքի քարոզ իրականացնելուց, կամ իր համոզմունքներն այլ անձանց պարտադրելուց, կամ այլ անձանց մտքի, կրոնի, խղճի վերաբերյալ իր համոզմունքները տարածելուց և ազդեցություն գործադրելուն ուղղված գործողություններ կատարելուց:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի ուսումնասիրությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ կրոնի ազատության իրավունքը չի ենթադրում անձի կողմից եկեղեցական արարողությունն ընդհատելու հնարավորությունը: Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրել է, որ Վարքագծի կանոնագրքի 45-րդ կետով նախատեսված պարտականությունները կիրառելի են միայն պաշտոնատար անձի կողմից ի պաշտոնե հանդես գալու դեպքերի նկատմամբ: Հաշվի առնելով, որ Ս. Սափեյանը եկեղեցի այցելել է ոչ աշխատանքային օրվա ընթացքում և այդ այցը չի ունեցել հրապարակային (լուսաբանվող) կամ պաշտոնական բնույթ, ինչպես նաև նկատի ունենալով, որ վերոնշյալ մեղիա հրապարակմամբ չի ներկայացվել որևէ տվյալ առ այն, որ Ս. Սափեյանը որևէ կերպ վկայակոչել է իր զբաղեցրած պաշտոնը կամ պայմանավորել իր պահանջները զբաղեցրած պաշտոնով՝ Հանձնաժողովը գտել է, որ Ս. Սափեյանը մեղիա հրապարակմամբ նկարագրված միջադեպի շրջանակներում հանդես է եկել որպես մասնավոր անձ:

Ըստ այդմ՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ Ս. Սափեյանի վարքագիծը չի հանգեցրել Վարքագծի կանոնագրքի 45-րդ կետի առերևույթ խախտման և որոշել է դրա առթիվ չհարուցել վարույթ:

3.«Փաշինյանը գոռաց, մատ թափ տվեց, ապա հերքեց ու ներողություն խնդրեց. արցախցի կինը չի ընդունի վարչապետի առաջարկը. ՏԵՄԱՆՅՈՒԹ», <https://factor.am/998232.html>, «Factor.am» լրատվական կայք, մարտի 23, 2026 թ.:

Հրապարակման համաձայն՝ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը մետրոյում վիճել է քաղաքացու հետ, գոռացել նրա վրա, անվանել «փախած»:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Վարքագծի կանոնագրքի 36-րդ և 37-րդ կետերի համատեքստում, որոնցով սահմանվում են հանրային պաշտոն

զբաղեցնող անձանց՝ բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն ցուցաբերելու, անձանց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունները:

Քննարկելով ՀՀ վարչապետի խոսքի և գործածված առանձին արտահայտությունների բովանդակությունը, նրա խոսքի հնչեցման ձևը, այն է՝ բարձրատոն լինելը, այն հանգամանքը, որ խոսքը հնչեցվել է քաղաքացու երեխայի ներկայությամբ, ինչպես նաև հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության մի շարք որոշումներով արձանագրվել է, որ Լեոնային Ղարաբաղի հայ բնակչությունը բռնի տեղահանվել է իր մշտական բնակության երկրից, իսկ բռնի տեղահանումն ինչպես Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրության, այնպես էլ ՀՀ քրեական օրենսգրքի համաձայն՝ համարվում է մարդկայնության դեմ ուղղված հանցագործություն՝ Հանձնաժողովը գտել է, որ ՀՀ վարչապետի խոսքերն առերևույթ վիրավորական և հանցագործության տուժողների փորձն արժեզրկող, ուստի՝ նրանց արժանապատվությունը նվաստացնող բնույթ են ունեցել: Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է, որ հրապարակմամբ նկարագրված՝ Ն.Փաշինյանի վարքագիծը պարունակել է վարքագծի կանոնների առերևույթ խախտման հատկանիշներ:

Միաժամանակ, Հանձնաժողովը կարևորել է այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությամբ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնների խախտման համար նախատեսված չեն իրավական պատասխանատվության կառուցակարգեր, իսկ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է Հանձնաժողովի եզրակացությամբ արձանագրված խախտման կամ շահերի բախման վերաբերյալ ներկայացնել հրապարակային պարզաբանում: Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է, որ քաղաքական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից վարքագծի կանոնի խախտում արձանագրելու՝ օրենսդրությամբ նախատեսված հետևանքը պաշտոնատար անձի հրապարակային պարզաբանման ներկայացումն է, մինչդեռ, քննարկվող դեպքում ՀՀ վարչապետն արդեն իսկ տեղի ունեցած միջադեպից հետո հանդես է եկել հրապարակային պարզաբանմամբ՝ ներողություն խնդրելով քաղաքացուց:

Ըստ այդմ, Հանձնաժողովը գտել է, որ տվյալ պարագայում սեփական նախաձեռնությամբ վարույթի հարուցումը նպատակահարմար չէ, քանի որ եթե անգամ վարույթի արդյունքում Հանձնաժողովն արձանագրի վարքագծի կանոնների խախտման առկայություն, դրա հնարավոր հետևանքը լինելու էր ՀՀ վարչապետի կողմից հրապարակային պարզաբանման ներկայացումը, որն արդեն իսկ ներկայացվել էր: Ուստի, Հանձնաժողովը գտել է, որ վարույթի հարուցումն առարկայազուրկ է՝ դրա հնարավոր հետևանքի վրա հասած լինելով պայմանավորված

և որոշել է վերոնշյալ մեղիա հրապարակմամբ նկարագրված դեպքի առթիվ չհարուցել վարույթ:

4. «Դուք շանս ունեք այն հասարակության մեջ, որտեղ երեխեքը շալվար չունեն, որ «ադնառագվի շալվար» շպրտեք ու ասեք «շուն ու շանգյալ». Փաշինյանը՝ ընդդիմությանը», <https://tert.am/am/news/2026/04/17/pashinyan-opposition/4267544>, «tert.am» լրատվական կայք, ապրիլի 17, 2026թ.:

Հրապարակման համաձայն՝ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանն Ազգային ժողովի նիստի ընթացքում քաղաքական հակառակորդների հասցեին վիրավորական արտահայտություններ է գործածել:

Հանձնաժողովը նշված հրապարակումն ուսումնասիրել է՝ նաև հիմք ընդունելով 2026 թվականի ապրիլի 18-ին, 21-ին, 22-ին և 29-ին նշված դեպքի վերաբերյալ ստացված դիմումները:

Դիմումները և մեղիա հրապարակումը Հանձնաժողովն ուսումնասիրել է Վարքագծի կանոնագրքի 36-37-րդ կետերի համատեքստում, որոնցով սահմանվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց՝ բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն ցուցաբերելու, անձանց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունները: Բացի այդ, դիմումներով վկայակոչվել են նաև Վարքագծի կանոնագրքի 61-64-րդ կետերը, որոնցով նախատեսվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց պարտականությունները նախընտրական շրջանում՝ կապված հանրային ռեսուրսների և պաշտոնեական դիրքի չչարաշահման հետ:

Քննարկելով ՀՀ վարչապետի խոսքի և գործածված առանձին արտահայտության բովանդակությունը, նրա խոսքի հնչեցման ձևը, խոսքին նախորդած իրադարձությունները, ինչպես նաև նախընտրական շրջանում կատարված լինելու հանգամանքը՝ Հանձնաժողովը գտել է, որ Ն.Փաշինյանի խոսքը չի պարունակում վարքագծի կանոնի առերևույթ խախտման հատկանիշներ՝ նկատի ունենալով, որ այն կատարվել է նախընտրական շրջանում՝ ընտրություններին մասնակցող կուսակցության անդամի (վարչության նախագահի) կողմից, վերաբերել է առաջիկա ընտրություններին, առաջին հերթին նպատակ է հետապնդել քննադատելու քաղաքական հակառակորդներին, իսկ կիրառված վիրավորական արտահայտությունները հիմնվել են Հակակոռուպցիոն կոմիտեի հրապարակած տեսանյութում ներկայացված ձայնագրությունների վրա, կապակցվել են Ն.Փաշինյանի քննադատությանը և իմաստային առումով լրացրել են այն ու կարևորապես՝ չեն պարունակել հայհոյանք կամ գոեհկաբանություն:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը գտել է, որ Ն.Փաշինյանի վարքագիծը չի պարունակում վարքագծի կանոնի առերևույթ խախտման հատկանիշներ և մերժել է նշված դեպքի առթիվ վարույթի հարուցումը:¹

5. «Շառուկյան Գագիկ, լեզուդ երկարել ա՞, ես քեզ ասում եմ՝ լակոտիդ Բելառուսից վզից բռնած բերելու ենք և դնենք պատասխանատվության»։ Նիկոլ Փաշինյան», <https://infocom.am/10034158/>, «infocom.am» լրատվական կայք, մայիսի 12, 2026 թ.:

Հրապարակման համաձայն՝ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը նախընտրական քարոզարշավի ընթացքում առերևույթ վիրավորական արտահայտություններ է կիրառել Գագիկ Շառուկյանի որդու հասցեին:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Վարքագծի կանոնագրքի 37-րդ կետի համատեքստում, որով սահմանվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց՝ այլոց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունը:

Քննարկելով ՀՀ վարչապետի խոսքի և գործածված առանձին արտահայտության բովանդակությունը, նրա խոսքի հնչեցման ձևը, խոսքին նախորդած իրադարձությունները, մասնավորապես՝ խոսքի հասցեատերերի՝ նախկինում դրսևորած վարքագիծը և հնչեցրած խոսքերը՝ Հանձնաժողովը գտել է, որ Ն.Փաշինյանի խոսքը չի պարունակում վարքագծի կանոնի առերևույթ խախտման հատկանիշներ:

Մասնավորապես, Հանձնաժողովը կարևորել է այն հանգամանքը, որ խոսքը կատարվել է նախընտրական շրջանում, երբ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն, արտահայտման ազատության սահմանները հատկապես լայն են: Հանձնաժողովը հիմնվել է նախորդիվ իր արտահայտած դիրքորոշումների վրա առ այն, որ նախընտրական շրջանում Կանոնագրքի 37-րդ կանոնի առերևույթ խախտում կարող է արձանագրվել միայն այն բացառիկ դեպքերում, երբ հանրային պաշտոն զբաղեցնող անձը կատարել է այնպիսի արտահայտություններ, որոնք ողջամտորեն կարող են հանգեցնել հանրային իշխանության հեղինակազրկման:

Հանձնաժողովը գտել է, որ Ն.Փաշինյանի խոսքը, թեև իր կոշտ բնույթին, առաջին հերթին ունեցել է նրա քաղաքական հակառակորդների արտաքին քաղաքական մոտեցումները և գաղափարները, ինչպես նաև նախկինում վարած արտաքին քաղաքականությունը քննադատելու նպատակ: Այս համատեքստում Ն.Փաշինյանն ընդգծել է, որ ընդդիմադիր քաղաքական ուժերի ղեկավարներին ցանկալի է

¹ Տես նաև Հանձնաժողովի՝ 2026 թվականի ապրիլի 27-ի՝ Վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթի հարուցումը մերժելու մասին թիվ 07/2026/Վ/Վ որոշումը, հասանելի՝ <https://cpcarmenia.am/wp-content/uploads/2026/05/00-4.pdf>, և 2026 թվականի մայիսի 8-ի՝ Վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթի հարուցումը մերժելու մասին թիվ 08/2026/Վ/Վ որոշումը, հասանելի՝ <https://cpcarmenia.am/wp-content/uploads/2026/05/00-7.pdf>

սահմանային լարվածությունների վերականգնումը, մինչդեռ նրանց երեխաները երբևէ պատերազմական գործողությունների շրջանակներում չեն կրակել, այլ կրակել են միայն Հայաստանի Հանրապետությունում: Հանձնաժողովն արձանագրել է, որ նշվածի համատեքստում է, որ Ն.Փաշինյանը հիշատակել է Ն.Ծառուկյանին, որը հետախուզման մեջ է գտնվում, մեղադրվելով, ի թիվս այլնի, զենքի գործադրմամբ խուլիգանություն կատարելու մեջ:

Հանձնաժողովն անդրադարձել է Ն.Փաշինյանի գործածած «լակոտ» բառին, արձանագրելով, որ թեև այն առերևույթ վիրավորական բնույթ ունի, այնուամենայնիվ, Ն.Փաշինյանի ամբողջ խոսքի համատեքստում այն դիտարկելու պարագայում ակներև է, որ այն հետապնդել է խոսքին լրացուցիչ կոշտ բնույթ հաղորդելու նպատակ, որը կարող է քաղաքական խոսքի շրջանակներում թույլատրելի ոճային ընտրություն համարվել: Ավելին, Հանձնաժողովի գնահատմամբ՝ նշված բառը գործածվել է նաև ընդգծելու համար Ն.Փաշինյանի վերաբերմունքն առ այն, որ վերջինս Ն.Ծառուկյանին տվյալ խոսքի շրջանակներում բացառապես դիտարկում է որպես Գ.Ծառուկյանի որդի, և նրա կարևորությունը տվյալ խոսքի շրջանակներում հենց դրանում է:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը գտել է, որ Ն.Փաշինյանի վարքագիծը չի պարունակում վարքագծի կանոնի առերևույթ խախտման հատկանիշներ և որոշել է հրապարակմամբ նկարագրված դեպքի առթիվ չհարուցել վարույթ:

6. «Ինչպես էր Փաշինյանը մատ թափ տալիս որդեկորույս մոր վրա, նրա աջակիցները՝ ոգևորված ծափ տալիս», <https://news.am/hy/video/1035801>, «news.am» լրատվական կայք, մայիսի 15, 2026թ., «ՏԵՍԱՆՅՈՒԹ. «Կալուզացուն էլ, Սերժին էլ, Գագոյին էլ, Ռոբին էլ կգացնելու եմ». գերլարված իրավիճակ Արաբկիրում.», <https://armlur.am/1561628/>, «armlur.am» լրատվական կայք, մայիսի 18, 2026թ., «Այ փսլինքներ, մասկեքներդ հատ-հատ հանելու եմ, մտցնելու եմ համապատասխան տեղը. վարչապետը՝ իրեն սպառնացող խմբին», <https://www.armtimes.com/hy/article/336730>, «armtimes.com» լրատվական կայք, մայիսի 18, 2026, «Այ տականք ինչի ես կենդանի, գնայիր զոհվեիր, ռադո քաշի համբալի մեկը. Փաշինյանը սկսեց վիրավորել», <https://news.am/hy/video/1036315>, «news.am» լրատվական կայք, մայիսի 18, 2026թ.:

Նշված ուսումնասիրության շրջանակներում քննարկված 4 հրապարակումներից յուրաքանչյուրը վերաբերել է առանձին դրվագի:

Առաջին հրապարակման համաձայն՝ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը նախընտրական քարոզարշավի ընթացքում գոռգոռացել է մահացած զինծառայողի մոր վրա:

Հանձնաժողովը նշված միջադեպը քննարկել է Վարքագծի կանոնագրքի 36-րդ և 37-րդ կետերի համատեքստում, որոնցով սահմանվում են հանրային պաշտոն զբաղեցնող անձանց՝ բարեկրթություն, քաղաքավարություն, նրբանկատություն, զսպվածություն ցուցաբերելու, անձանց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունները:

Հանձնաժողովն արձանագրել է, որ հրդեհի արդյունքում զոհված զինծառայողի մոր հետ հաղորդակցության շրջանակներում Ն.Փաշինյանը որոշ դեպքերում արտահայտել է իր հարգանքը կնոջ և նրա սգի նկատմամբ՝ հանելով գլխարկը, իջնելով մեքենայից և մոտենալով նրան, ինչպես նաև նշելով, որ խոնարհվում է նրա և նրա զոհված որդու առջև և հարգում է նրա սուգը: Այնուամենայնիվ, Հանձնաժողովը գտել է, որ Ն.Փաշինյանի գործածած որոշ արտահայտություններ առերևույթ ոչ նրբանկատ և ոչ զգայուն են եղել, մասնավորապես, օրինակ, բարձրատոն կերպով հնչեցված հարցերն առ այն, թե ինչու զոհված զինծառայողի մայրը չի գնում ընդդիմության հանրահավաքներին, ինչպես նաև «կալուգացու վճարված նարատիվները» չտարածելու կոչը, քանի որ դրանից կարող է տպավորություն ստեղծվել, որ Ն.Փաշինյանը մեղադրում է կնոջը գումարի դիմաց նշված հավաքին ներկայանալու մեջ:

Հանձնաժողովն ընդգծել է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք պարտավոր են առավելագույն կարեկցանքով, նրբանկատությամբ, զգայունությամբ և զգուշությամբ հաղորդակցվել աղետալի իրադարձություններում զոհված անձանց հարազատների հետ՝ հարգելով նրանց սուգը և հաշվի առնելով նրանց ծանր հոգեհուզական դրությունը:

Միաժամանակ, Հանձնաժողովն արձանագրել է, որ նրբանկատություն դրսևորելու պահանջը նախատեսված է Կանոնագրքի 36-րդ կետով, որը կիրառելի է միայն այն դեպքերում, երբ հանրային պաշտոն զբաղեցնող անձինք գործում են ի պաշտոնե, մինչդեռ քննարկվող միջադեպի շրջանակներում Ն.Փաշինյանը գտնվել է արձակուրդում և հանդես է եկել որպես ընտրություններին մասնակցող կուսակցության ղեկավար, ոչ թե ՀՀ վարչապետ:

Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է, որ Վարքագծի կանոնագրքի 36-րդ կետը չի կարող կիրառելի լինել քննարկվող դեպքում Ն. Փաշինյանի վարքագծի նկատմամբ: Ինչ վերաբերում է Կանոնագրքի 37-րդ կետին, ապա Հանձնաժողովը գտել է, որ Ն. Փաշինյանի կողմից չեն գործածվել վիրավորական բառեր կամ այլ արտահայտություններ, որոնք կարող էին հանգեցնել անձանց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականության առերևույթ խախտման:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը գտել է, որ Ն.Փաշինյանի վարքագիծը չի պարունակում վարքագծի կանոնների առերևույթ խախտման հատկանիշներ և որոշել է հրապարակմամբ նկարագրված դեպքի առթիվ չհարուցել վարույթ:

Երկրորդ հրապարակման համաձայն՝ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը նախընտրական քարոզարշավի ընթացքում հունից դուրս է եկել, վիրավորել քաղաքացուն, իսկ երրորդ հրապարակման համաձայն՝ ՀՀ վարչապետ Ն. Փաշինյանն առերևույթ վիրավորական արտահայտություններ է գործածել իր հանդեպ սպառնալիքներ հնչեցրած անձանց հասցեին:

Հանձնաժողովը նախ արձանագրել է, որ երկրորդ հրապարակմամբ ներկայացված՝ Ն. Փաշինյանի վարքագիծը՝ քաղաքացու և իր քաղաքական հակառակորդների հասցեին հնչեցված արտահայտությունների մասով, արդեն իսկ քննարկվել է Հանձնաժողովի կողմից քաղաքացի Ավետիք Զալաբյանի դիմումի շրջանակներում, որի արդյունքում ընդունվել է 2026 թվականի մայիսի 26-ի՝ վարքագծի կանոնների առերևույթ խախտման վերաբերյալ վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումը, քանի որ արձանագրվել է վարքագծի կանոնների առերևույթ խախտման բացակայություն:

Ըստ այդմ, Հանձնաժողովը երկրորդ հրապարակման հիման վրա քննարկել է Ն.Փաշինյանի վարքագիծը միայն դիմակավորված անձանց հասցեին հնչեցված արտահայտությունների իրավաչափության տեսանկյունից՝ այն դիտարկելով երրորդ հրապարակման հետ համատեղ:

Հանձնաժողովը նշված հրապարակումները քննարկել է Վարքագծի կանոնագրքի 37-րդ կետի համատեքստում, որով սահմանվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց՝ այլոց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունը:

Հանձնաժողովն արձանագրել է, որ թեև նշված միջադեպերի ընթացքում Ն.Փաշինյանը դիմակավորված անձանց հասցեին հնչեցրել է առերևույթ վիրավորական արտահայտություններ և առերևույթ կերպով որպես ֆիզիկական սպառնալիք ընկալվող արտահայտություններ, այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ նշված դիմակավորված անձանց մասնակցությամբ տեսանյութում ևս ՀՀ վարչապետի հասցեին հնչել են վիրավորանքներ, ինչպես նաև հաշվեհարդարի սպառնալիք պարունակող արտահայտություններ՝ Հանձնաժողովի գնահատմամբ, Ն.Փաշինյանի վարքագիծը եղել է դիմակավորված անձանց խոսքերին համարժեք: Հանձնաժողովը նաև կարևորել է այն հանգամանքը, որ դիմակավորված անձանց մասնակցությամբ տեսանյութի տարածման դեպքի առթիվ Քննչական կոմիտեն նախաձեռնել է քրեական վարույթ՝ մի խումբ անձանց կողմից սպանության նախապատրաստության, համակարգչային սաբոտաժ կատարելու և հրազենի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության դեպքերի առթիվ: Ըստ այդմ, Հանձնաժողովն ընդգծել է, որ հրապարակված տեսանյութը պարունակել է Ն.Փաշինյանի հասցեին ենթադրյալ սպանության նախապատրաստման հատկանիշներ: Բացի այդ, տեսանյութը հրապարակվել էր քննարկվող միջադեպերից մի քանի ժամ առաջ՝ նույն օրը, ինչից ելնելով՝ Հանձնաժողովը գտել է, որ Ն.Փաշինյանի խոսքերը պետք է դիտարկվեն

սպանության ենթադրյալ սպառնալիքին անմիջական հուզական արձագանքի համատեքստում:

Ըստ այդմ, Հանձնաժողովը գտել է, որ նշված հրապարակումներով ներկայացված՝ Ն.Փաշինյանի վարքագիծը չի հատել իրավաչափության սահմանը:

Չորրորդ հրապարակման համաձայն՝ ՀՀ վարչապետ Ն.Փաշինյանը նախընտրական քարոզչության ընթացքում առերևույթ վիրավորական արտահայտություններ է կիրառել իրեն հարցեր ուղղած քաղաքացու հասցեին:

Հանձնաժողովը նշված հրապարակումը քննարկել է նույն դեպքի առթիվ քաղաքացի Աննա Կոստանյանի ներկայացրած դիմումի հետ համատեղ՝ Վարքագծի կանոնագրքի 37-րդ կետի համատեքստում:

Քննարկելով Ն. Փաշինյանի խոսքն ամբողջությամբ, ինչպես նաև կատարված առանձին արտահայտությունները, դրանց բովանդակությունը և խոսքի ձևը, մասնավորապես՝ տոնայնությունը, այն սոցիալական կոնտեքստը, որում խոսքը կատարվել է, Ն. Փաշինյանի հետ երկխոսող քաղաքացու անձը և վարքագիծը՝ Հանձնաժողովը գտել է, որ Ն.Փաշինյանի կողմից կատարված մի շարք արտահայտություններ ունեցել են առերևույթ վիրավորական բնույթ և կատարվել են բարձրատոն, ինչն առերևույթ կերպով խիստ անհամաչափ է եղել քաղաքացու խոսքի ու վարքագծին՝ նկատի ունենալով, որ վերջինս, թեև արտահայտել է Ն.Փաշինյանի հնչեցրած դիրքորոշումների հետ անհամաձայնություն և քննադատել է վերջինիս, այնուամենայնիվ, նրա խոսքը չի հատել քաղաքական քննադատության շրջանակներում թույլատրելի խոսքի սահմանները: Հանձնաժողովը նաև գտել է, որ Ն.Փաշինյանի կատարած որոշ արտահայտություններ հանրային ընկալման տեսանկյունից կարող են խնդրահարույց լինել՝ նկատի ունենալով, որ դրանք ուղղված են անձանց անորոշ՝ չհստակեցված շրջանակի, ինչի արդյունքում, հաշվի առնելով դրանց բովանդակությունը, կարող են հանրության կողմից ընկալվել որպես նշված անձանց շրջանակի նկատմամբ առերևույթ անհանդուրժողական վերաբերմունքի արտահայտում:

Հանձնաժողովն ընդգծել է, որ Կանոնագրքի 37-րդ կետով սահմանված՝ այլոց պատիվն ու արժանապատվությունը հարգելու պարտականությունը, որպես անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի բաղադրիչ, ենթադրում է նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անձի կամ անձանց խմբի նկատմամբ (պայմանավորված նրանց անձնական կամ սոցիալական բնույթի հատկանիշով) անհանդուրժողականություն հրահրելուց, ինչպես նաև անձի կամ անձանց խմբի վերաբերյալ վիրավորանքներից, բացասական կարծրատիպերի տարածումից, խարանավորումից կամ հանրության կողմից ողջամտորեն այդպիսին ընկալվող խոսքից գերծ մնալու պահանջը:

Վերոգրյալից ելնելով՝ Հանձնաժողովը եզրակացրել է, որ դիմումով և հրապարակմամբ նկարագրված վարքագիծը պարունակել է Վարքագծի կանոնագրքի 37-րդ կետի առերևույթ խախտում և դեպքի կապակցությամբ հարուցել է վարույթ:

7. «Սպիտակի փոխքաղաքապետն ու քաղաքապետը խոչընդոտել են «Ազատության» աշխատանքը», <https://www.azatutyun.am/a/33760083.html>, [«azatutyun.am»](https://www.azatutyun.am) լրատվական կայք, մայիսի 19, 2026 թ.:

Հրապարակման համաձայն՝ Լոռու մարզում Սպիտակ համայնքի ղեկավարի տեղակալը խոչընդոտել է «Ազատության» աշխատանքը, մասնավորապես, հարվածել է լրատվամիջոցի տեսախցիկին:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Վարքագծի կանոնագրքի 51-րդ կետի համատեքստում, որի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը պարտավոր է լրագրողների, լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելիս ցուցաբերել հարգալից վերաբերմունք, իր գործողություններով չխախտել լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքները, չխոչընդոտել նրանց օրինական գործունեությանը և մասնագիտական աշխատանքին:

Հանձնաժողովն արձանագրել է, որ Ա. Մաթոսյանը դրսևորել է առերևույթ ոչ հարգալիք վարքագիծ, մասնավորապես, լրագրողին դիմել է հանդիմանական, վիճաբանական տոնով, գործածել է առօրյա-խոսակցական լեզվում կիրառելի արտահայտություններ, որոնք արտահայտում են հանդիմանություն և բնորոշ չեն պաշտոնական խոսքին: Բացի այդ, Ա. Մաթոսյանը նաև հարվածել է տեսախցիկին, որը Հանձնաժողովի գնահատմամբ առերևույթ կերպով ունեցել է լրագրողի գործունեությունը, այն է՝ տեսանկարահանումը և իրեն հարցերի ուղղումը խոչընդոտելու նպատակ:

Ըստ այդմ՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ Ա. Մաթոսյանի վարքագիծը պարունակում է Վարքագծի կանոնագրքի 51-րդ կետի առերևույթ խախտման հատկանիշներ և հարուցել է վարույթ: Միաժամանակ, նկատի ունենալով, որ նույն դեպքի առթիվ նախաձեռնված է քրեական վարույթ, վարքագծի կանոնի առերևույթ խախտման վերաբերյալ վարույթը կասեցվել է:

8. «Սպիտակի փոխքաղաքապետն ու քաղաքապետը խոչընդոտել են «Ազատության» աշխատանքը», <https://www.azatutyun.am/a/33760083.html>, [«azatutyun.am»](https://www.azatutyun.am) լրատվական կայք, մայիսի 19, 2026 թ.:

Հրապարակման համաձայն՝ Լոռու մարզում Սպիտակ համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը խոչընդոտել է «Ազատության» աշխատանքը:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Վարքագծի կանոնագրքի 51-րդ կետի համատեքստում, որի համաձայն՝ հանրային պաշտոն զբաղեցնող անձը

պարտավոր է լրագրողների, լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելիս ցուցաբերել հարգալից վերաբերմունք, իր գործողություններով չխախտել լրատվամիջոցների ներկայացուցիչների իրավունքները, չխոչընդոտել նրանց օրինական գործունեությանը և մասնագիտական աշխատանքին:

Ք. Նիկողոսյանի վարքագծի, գործածած արտահայտությունների բովանդակության և դրանց ձևի՝ տոնայնության, վերլուծությամբ Հանձնաժողովն արձանագրել է, որ Ք.Նիկողոսյանի վարքագիծը պարունակել է լրագրողի նկատմամբ առերևույթ ոչ հարգալից վերաբերմունքի դրսևորման հատկանիշներ և ունեցել է առերևույթ վիրավորելու և ոչ թե քննադատելու նպատակ: Այսպես, Հանձնաժողովը կարևորել է, որ Ք.Նիկողոսյանն առանձնացրել է լրագրողին և ընդգծել, որ լրագրողն «այն մարդը չէ», որին ինքը բան ասի՝ այդպիսով արտահայտելով լրագրողի նկատմամբ առանձնահատուկ բացասական վերաբերմունք: Ավելին, Ք.Նիկողոսյանն այնուհետև նշել է, որ հասկացողին են բան ասում՝ այդպիսով, ըստ էության, լրագրողին կոչելով անհասկացող:

Ըստ այդմ՝ Հանձնաժողովն արձանագրել է, որ Ք.Նիկողոսյանի վարքագիծը պարունակում է Վարքագծի կանոնագրքի 51-րդ կետի առերևույթ խախտման հատկանիշներ և հարուցել է վարույթ:

Անհամատեղելիության պահանջների վերաբերյալ

1. *«Միլիոնավոր եկամուտներ՝ տարբեր կազմակերպություններից. ինչ է հայտարարագրել Աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար Լուսինե Քոչարյանը», <https://armlur.am/1546522/>, «Armlur.am», լրատվական կայք, մարտի 9, 2026 թ.:*

Հրապարակումն անդրադարձել է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Լուսինե Քոչարյանի՝ պաշտոնի ստանձնման հայտարարագրում առկա եկամուտներին և դրանց աղբյուրներին: Միաժամանակ, Հանձնաժողովն անհամատեղելիության պահանջների պահպանման շրջանակներում ուսումնասիրել է Լուսինե Քոչարյանի՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալի պաշտոնը ստանձնելուց՝ 2025 թվականի նոյեմբերի 13-ից հետո ստացված եկամուտները և ստացման հիմքերը: Ըստ այդմ՝ արձանագրվել է, որ պաշտոնը ստանձնելուց հետո Լուսինե Քոչարյանն ստացել է եկամուտ «ՕՖՆԱԸ» ՍՊ ընկերությունից՝ որպես ընկերության նախկին բաժնետեր: Ընկերությունում իր մասնակցությունը վերջինս դադարեցրել է 2025 թվականի հոկտեմբերի 16-ին, իսկ ընկերության գործադիր մարմնի ղեկավարի պաշտոնում պաշտոնավարումը դադարել է 2025 թվականի սեպտեմբերի 17-ից: Ըստ այդմ՝ առևտրային

կազմակերպությունում մասնակցությունը և դրա կառավարման մարմնում ներկայացվածությունը դադարեցվել է նախքան անձի կողմից հանրային պաշտոնի ստանձնումը:

Միաժամանակ, ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ նախարարի տեղակալի պաշտոնը ստանձնելուց՝ 2025 թվականի նոյեմբերի 13-ից հետո Լ. Քոչարյանը վարձատրություն է ստացել «ԷՐԵԲՈՒՆԻ» բժշկական ակադեմիա հիմնադրամից: 2026 թվականի հունվարի 1-ից հետո «ԷՐԵԲՈՒՆԻ» բժշկական ակադեմիա հիմնադրամից ստացված եկամուտներ առկա չեն եղել: «Հանրային ծառայության մասին» օրենքի համատեքստում հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողներին հնարավորություն է տրվում պաշտոնում նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, ապահովել անհամատեղելիության պահանջների կատարումը:

Միաժամանակ, Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրությամբ արձանագրվել է նաև, որ նախարարի տեղակալի պաշտոնը ստանձնելուց հետո Լ. Քոչարյանը Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում նախ աշխատել է որպես ասիստենտ, ապա՝ մինչև 2026 թվականի հունվարի 26-ը զբաղեցրել է մասնագետի պաշտոն: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Լ. Քոչարյանը Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում զբաղեցրել է դասախոսի և քննական հանձնաժողովի անդամի պաշտոնները՝ կատարելով «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով կրթական աշխատանք, ուստի Հանձնաժողովն արձանագրել է, որ Լ. Քոչարյանի կողմից անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտում առկա չէ:

2. «85 հազար դոլար կանխիկ, 12 անշարժ գույք, միլիոնավոր եկամուտներ. Լոռու փոխմարզպետի ունեցվածքը», <https://armkur.am/1547267/>, «Armlur.am» լրատվական կայք, մարտի 12, 2026 թ.:

Հրապարակման համաձայն՝ Լոռու մարզպետի տեղակալ Արսեն Ղարիբյանը եկամուտ է ստացել ձեռնարկատիրական գործունեությունից՝ Ռուսաստանի Դաշնությունում գործունեություն իրականացնող «Ազիմուտ» առևտրային կազմակերպությունից:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Ա. Ղարիբյանի անհամատեղելիության պահանջների համատեքստում: Ա. Ղարիբյանի՝ պաշտոնի ստանձնման հայտարարագրի ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ վերջինս ստացել է եկամուտ Ռուսաստանի Դաշնությունում գրանցված «Ազիմուտ» շինարարական կազմակերպությունից՝ որպես մասնաբաժին: Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրությամբ Ա. Ղարիբյանի ստացած եկամուտների կամ վերջինիս բաժնեմասնակցության վերաբերյալ

տեղեկություն չի պարզվել: Միաժամանակ, նկատի ունենալով կազմակերպության՝ արտերկրում գրանցված լինելու հանգամանքը, Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների տվյալների ուսումնասիրությամբ ձեռք չեն բերվել բավարար տեղեկություններ ընկերության գործունեության վերաբերյալ: Ըստ այդմ՝ Հանձնաժողովը պարզաբանում է հայցել Ա. Ղարիբյանից՝ «Ազիմուտ» առևտրային կազմակերպությունում մասնակցության առկայության և պաշտոնը ստանձնելուց հետո վերջինիս կողմից ձեռնարկված քայլերի վերաբերյալ: Ի պատասխան Հանձնաժողովի հարցմանը՝ Ա. Ղարիբյանը հայտնել է, որ Լոռու մարզպետի տեղակալի պաշտոնի ստանձնման՝ 2025 թվականի սեպտեմբերի 12-ի դրությամբ, ինչպես նաև պաշտոնավարման ընթացքում չի ունեցել մասնակցություն «Ազիմուտ» առևտրային կազմակերպությունում, իսկ հայտարարագրում ներկայացվել են մինչև պաշտոնի ստանձնումը ստացված եկամուտները, ուստի Հանձնաժողովն արձանագրել է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտում առկա չէ:

3. «155 հազար դոլար կանխիկ, 8 անշարժ գույք. ինչ ունի ՍՍՏՄ ղեկավարը. «Ժողովուրդ»», <https://armkur.am/1547491/>, «Armlur.am» լրատվական կայք, մարտի 13, 2026 թ.:

Հրապարակման համաձայն՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար Տիգրան Պետրոսյանն ունի մասնակցություն մի շարք առևտրային կազմակերպություններում:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Տ. Պետրոսյանի անհամատեղելիության պահանջների համատեքստում: Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ Տիգրան Պետրոսյանը Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի պաշտոնը ստանձնելուց՝ 2025 թվականի հունիսի 24-ից հետո չի ունեցել մասնակցություն կամ ներկայացվածություն առևտրային որևէ կազմակերպությունում: Վերջինս մինչ պաշտոնը ստանձնելը՝ 2019 թվականի հուլիսի 9-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը ունեցել է 50 % մասնակցություն «Էյր լոգիստիկ կարգո» ՍՊ ընկերությունում, իսկ 2017 թվականի մայիսի 15-ից մինչև 2017 թվականի հոկտեմբերի 13-ը Տ. Պետրոսյանը հանդիսացել է «ԳԼՈՒԱԼ ԲՐԵԴ» ՍՊ ընկերության գործադիր մարմնի ղեկավարը: Ըստ այդմ, Հանձնաժողովն արձանագրել է, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով անհամատեղելիության պահանջի առերևույթ խախտում առկա չէ՝ նկատի ունենալով ընկերություններում Տ. Պետրոսյանի մասնակցության և գործադիր մարմնում պաշտոնավարման ավարտի ժամկետները:

4. «Միլիարդատեր պաշտոնյան, որը միլիոնավոր եկամուտներ ունի նաև բնամթերքով. ով է նա. «Ժողովուրդ»», <https://armlur.am/1551497/>, «Armlur.am» լրատվական կայք, ապրիլ 1, 2026 թ.:

Հրապարակման համաձայն՝ Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար Արման Ավետիսյանն ունի մասնակցություն մի շարք առևտրային կազմակերպություններում:

Հանձնաժողովը հրապարակումն ուսումնասիրել է Ա. Ավետիսյանի անհամատեղելիության պահանջների համատեքստում: Հանձնաժողովին հասանելի տեղեկատվական աղբյուրների ուսումնասիրությամբ արձանագրվել է, որ Ա. Ավետիսյանը մինչև Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնը ստանձնելը՝ 2019 թվականի հունվարի 8-ը, ունեցել է մասնակցություն «Ուսանող-Ռետրո» ՍՊ, «Գազ-Փարթս» ՍՊ, «Արիա Թրեյդ» ՍՊ, «Ենյան» ՍՊ ընկերություններում:

Ա. Ավետիսյանը 2024 թվականի նոյեմբերի 24-ին ժառանգել է նաև «Նազիկ Սարգսյան» ՍՊ ընկերության 100 % բաժնեմասը: Ընկերությունը 2024 թվականի դեկտեմբերի 14-ից լուծարման գործընթացում է գտնվում: Ըստ այդմ՝ Հանձնաժողովը «Հանրային ծառայության մասին» օրենքի համատեքստում անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտում սույն դեպքով չի արձանագրել:

Ուսումնասիրությամբ արձանագրվել է նաև, որ Ա. Ավետիսյանը Շուկայի վերահսկողության տեսչական մարմնի ղեկավար պաշտոնը ստանձնելուց՝ 2019 թվականի հունվարի 8-ից հետո՝ 2020 թվականի հունվարի 21-ին անձամբ հիմնադրել է «Ենյան Էներջի» ՍՊ ընկերությունը, ինչպես նաև 2024 թվականի հուլիսի 2-ին կայացրել է որոշում նույն ընկերության գործադիր մարմնի ղեկավարի փոփոխության վերաբերյալ, որով, փաստացի, իրականացրել է «Ենյան Էներջի» ՍՊ ընկերության կառավարմանն ուղղված գործառույթներ: Բացի այդ, Ա. Ավետիսյանը «Ենյան Էներջի» ՍՊ ընկերության կանոնադրական կապիտալում իր ունեցած բաժնեմասը (100 %) 2020 թվականի հունվարի 21-ից հավատարմագրային կառավարման է հանձնել ֆիզիկական անձ կառավարչի, որի արդյունքում առերևույթ խախտվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված՝ հավատարմագրային կառավարչին ներկայացվող պահանջները:

Ի լրումն վերոգրյալի՝ ուսումնասիրության շրջանակներում Հանձնաժողովը պարզել է, որ պաշտոնավարման ընթացքում՝ 2024 թվականի նոյեմբերի 24-ին Ա. Ավետիսյանը ժառանգել է մեկ այլ՝ «Ենյան Գրուպ» ՍՊ ընկերության 100 % բաժնեմասը, որը 2024 թվականի նոյեմբերի 27-ին հավատարմագրային կառավարման է հանձնել ֆիզիկական անձ կառավարչի, որի արդյունքում կրկին թույլ է տվել «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված՝ անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտում:

Վերոգրյալ փաստական հանգամանքներից ելնելով՝ Հանձնաժողովը 2026 թվականի հունիսի 22-ին որոշել է անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտման հիմքով Ա. Ավետիսյանի նկատմամբ հարուցել վարույթ:

Անհամատեղելիության պահանջների մշտադիտարկում

Հանձնաժողովը, համաձայն «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, հետևում է պետական պաշտոն զբաղեցնող անձանց, համայնքների ղեկավարների, նրանց տեղակալների, Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների, նրանց տեղակալների պաշտոն զբաղեցնող անձանց կողմից օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջների և այլ սահմանափակումների պահպանմանը: Սույն գործառույթի ապահովման շրջանակներում Հանձնաժողովը 2026 թվականին նախաձեռնել է մշտադիտարկում **Երևանի քաղաքապետի, նրա տեղակալների, ինչպես նաև Երևան համայնքի վարչական շրջանների ղեկավարների և վերջիններիս տեղակալների** շրջանում:

2022-2025 թվականներին, ընդհանուր առմամբ, ուսումնասիրություն է իրականացվել օրենսդիր, գործադիր մարմինների ներկայացուցիչների, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց վերաբերյալ, այդուհանդերձ, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնատար անձանց անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման շրջանակներում ընդգրկված չեն եղել Երևան քաղաքի ղեկավարը և վերջինիս տեղակալները, ինչպես նաև Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարները և նրանց տեղակալները, որոնց անհամատեղելիության պահանջների պահպանմանը հետևելը ևս Հանձնաժողովի իրավասությունն է:

Անհամատեղելիության պահանջների պահպանման մշտադիտարկման 2026 թվականի պլանը հաստատվել է Հանձնաժողովի՝ 2026 թվականի փետրվարի 27-ի N 01-Լ որոշմամբ: Հաստատված պլանը հրապարակվել է 2026 թվականի մարտի 5-ին՝ <https://cpcarmenia.am/wp-content/uploads/2026/03/11-1.pdf>:

Մշտադիտարկման շրջանակներում ուսումնասիրվում են նշված անձանց՝ բաժնային արժեթղթերի տիրապետման, այլ աղբյուրից վարձատրության ստացման, առևտրային կազմակերպություններում մասնակցություն կամ ներկայացվածություն ունենալու կամ այլ եղանակով ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, իրենց կարգավիճակով չպայմանավորված այլ պաշտոններ զբաղեցնելու վերաբերյալ տվյալները: Զուգահեռաբար՝ ուսումնասիրվում է պաշտոնատար անձանց հետ

փոխկապակցված անձանց և առևտրային կազմակերպությունների՝ պետական գնումների գործընթացներին հնարավոր մասնակցությունը:

2026 թվականի առաջին կիսամյակում Հանձնաժողովի կողմից մշտադիտարկման սուբյեկտ հանդիսացող շուրջ 20 պաշտոնատար անձանց, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի անդամների նկատմամբ արդեն իսկ իրականացվել են նախնական ուսումնասիրություններ, այդ թվում՝ տարբեր հարցումների միջոցով: Մշտադիտարկման գործընթացը շարունակվում է:

1.3 Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից պաշտոնեական պարտականությունների կատարման ընթացքում ստացված նվերների հաշվառման գործընթացի կազմակերպումը


«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1.3 կետի համաձայն՝ Հանձնաժողովի գործառույթներից է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների կողմից նվերներ ընդունելու սահմանափակումների պահպանմանը հետևելը, նվերների հաշվառման գործընթացը կանոնակարգելը և վերահսկելը: Միաժամանակ, Հանձնաժողովի լիազորությունների ներքո ամրագրվում է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների նվերների հաշվառման ռեեստրի վարումը և նվերների հաշվառման ռեեստրի հրապարակման ենթակա տվյալների հրապարակումը:

Հանձնաժողովը հաշվետու տարվա ընթացքում շարունակել է իրականացնել հանրային և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից ստացված նվերների հաշվառումը և հրապարակումը՝ հաշվառման ձևաթղթերի միջոցով: Այսպես՝ 2026 թվականի առաջին կիսամյակում հաշվառվել և Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով հրապարակվել է նվերի հաշվառման 81 ձևաթուղթ, որոնցից 34-ը ներկայացվել է Պետական արարողակարգի ծառայության կողմից, 47-ը՝ ներկայացվել է հանրային և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից: Հաշվառված նվերները հիմնականում ստացվել են ՀՀ վարչապետի, Ազգային ժողովի նախագահի, Արտաքին գործերի նախարարի և տեղակալի, Քննչական կոմիտեի, Քրեակատարողական ծառայության, Հարկադիր կատարումն ապահովող ծառայության և Ներքին գործերի նախարարության ծառայողների կողմից: 2025 թվականի առաջին կիսամյակի համեմատ հաշվառված և հրապարակված նվերների թիվն աճել է 29-ով, ինչը հնարավոր է եղել ապահովել նաև Հանձնաժողովի կանխարգելիչ մանդատի շրջանակներում իրականացված մեղիա մշտադիտարկման և ձեռնարկված համապատասխան միջոցների շնորհիվ: Մասնավորապես, հանրային իշխանության համապատասխան մարմինների ծառայողներին և պաշտոնատար

անձանց առաջարկվել է օրենքով սահմանված կարգով և ժամկետում հաշվառել ստացված՝ հաշվառման ենթակա նվերները՝ համապատասխան ձևաթղթերի լրացման միջոցով: Արդյունքում՝ նվերներն, ըստ սահմանված կարգի, հաշվառվել և հրապարակվել են Հանձնաժողովի կայքէջում:

Հանձնաժողովը հաշվետու տարում հաշվառման գործընթացի կազմակերպմանը զուգահեռ խորհրդատվություն և մեթոդական աջակցություն է տրամադրել հանրային և հանրային ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց, բարեվարքության հարցերով կազմակերպիչներին՝ նվերների ընդունման սահմանափակումներին առնչվող հարցերի շուրջ (ամենօրյա ռեժիմով): Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում սահմանված կարգով աջակցություն է տրամադրել նաև ստացված թվով 12 նվերի գնորոշման հարցում:

Հաշվառված նվերների ձևաթղթեր



Հրապարակված ձևաթղթերին կարելի է ծանոթանալ Հանձնաժողովի կայքէջում՝ <https://drive.google.com/drive/u/1/folders/1OnJ-NUHJpsMYEir9ICHgj1X4upTc6W71>

Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից աշխատանքներ են տարվել վերսկսելու նվերների էլեկտրոնային ռեեստրի կառուցման աշխատանքները, որոնք ընդհատվել էին 2024 թվականին՝ պայմանավորված ԱՄՆ ՄԶԳ համապատասխան ծրագրի կասեցմամբ: Արդեն 2026 թվականի հունիսին կնքվել է համապատասխան համաձայնագիր՝ ռեեստրի կառուցումն ավարտին հասցնելու նպատակով, որով նախատեսվել է մինչև ընթացիկ տարվա ավարտ գործարկել թվային ռեեստրը:

1.4 Կոռուպցիայի կանխարգելման ոլորտում վիճակագրության վարումը

Բարեվարքության համակարգին առնչվող խախտումների քննությունների տարեկան վիճակագրության ամփոփման նպատակով Հանձնաժողովը 2025 թվականի դեկտեմբեր ամսին մշակել և շրջանառել է էլեկտրոնային հարցաթերթ, որի միջոցով տեղեկատվություն է հավաքագրվել հանրային իշխանության մարմիններից, այդ թվում՝ համայնքապետարաններից: Ըստ այդմ՝ 2026 թվականի առաջին կիսամյակում հավաքագրվել և ամփոփվել են 2025 թվականի տարեկան վիճակագրական տվյալները:

2025 թվականին անցկացված հարցմանը մասնակցել են պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման թվով 93 մարմիններ: Հարցաթերթերը լրացվել են Բարեվարքության հարցերով կազմակերպիչների կողմից: 2024 թվականի համեմատությամբ՝ 2025 թվականի հարցմանը մասնակցած գերատեսչությունների թիվը 10-ով ավելացել է, իսկ 2023 թվականի համեմատությամբ՝ 64-ով: Այնուամենայնիվ, որակական առումով ստացված տվյալները նախորդ տարվա համեմատ գրեթե նույնական են եղել:

2025 թվականի վիճակագրության արդյունքները մանրամասն վերլուծվել և Հանձնաժողովի կողմից հրապարակվել են Բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ 2025 թվականի տարեկան հաղորդմամբ՝ հետևյալ հղումով՝ <https://cpcarmenia.am/wp-content/uploads/2026/06/2025-բարեվարքության-հաղորդում.pdf>:

Ի թիվս այլնի, վիճակագրության արդյունքների վերլուծությունը թույլ է տվել կատարել հետևյալ հիմնական արձանագրումները՝

- Հաշվետու տարվա վիճակագրական տվյալները և նախորդ տարիների արդյունքների համադրումը ցույց է տվել, որ 2025 թվականին հիմնականում չեն մշակվել կամ ներդրվել հանրային ծառայողների կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների, նվերների ընդունման սահմանափակումների խախտումների և շահերի բախման դեպքերի վիճակագրության վարման ներքին կանոնակարգեր կամ վիճակագրության վարման այլ մեխանիզմներ: Առանձին գերատեսչություններ դեռևս վիճակագրությունը վարում են գերատեսչության ղեկավարի հրամանների, համայնքների ղեպքում՝ համայնքի ղեկավարի/ավագանու որոշմամբ հաստատված պլաններով: Ուստի, վիճակագրական տվյալները մարմինների կողմից, ըստ էության, ամփոփվում են սույն հարցման շրջանակներում Հանձնաժողով ներկայացնելիս:

- Նախորդ տարիների համեմատ՝ Բարեվարքության համակարգին առնչվող խախտումների քննությունների ընդհանուր թիվն էականորեն աճել է (2023 թվականին իրականացվել է 51 քննություն, 2024 թվականին՝ 143, 2025 թվականին՝ 211):

- Այդուհանդերձ, տեղեկատվության ամփոփման համատեքստում մարմինների հետ հաղորդակցության շրջանակներում պարզ է դարձել նաև, որ տեղական ինքնակառավարման և պետական կառավարման որոշ մարմիններում ոչ պատշաճ

քննություններ են իրականացվել: Մի շարք դեպքերում քննություններն իրականացվել են կարգապահական խախտումների քննության ընդհանուր կարգով՝ չնայած դրանք քննելու իրավասությունը վերապահված է բացառապես էթիկայի հանձնաժողովներին: Այսպիսի պրակտիկան բացառում է էթիկայի հանձնաժողովների եզրակացությունների վերանայման հիման վրա Հանձնաժողով դիմելու և դրանք բողոքարկելու՝ անձանց օրենսդրական հնարավորությունը, ուստի հարցման արդյունքներով հանրային ծառայողների կողմից պատասխանատվության կիրառման վերաբերյալ որոշումների բողոքարկման դեպքեր գրեթե չեն արձանագրվել: Արձանագրված սակավ դեպքերում բողոքարկումն իրականացվել է դատական կարգով՝ հաշվի առնելով քննությունների յուրահատկությունները:

- Թեև, ընդհանուր առմամբ, առկա չէ էթիկայի հանձնաժողովների ձևավորման բավարար պրակտիկա, այդուհանդերձ, հարցումների արդյունքները վկայել են, որ անգամ այն դեպքերում, երբ բարեվարքությանն առնչվող խախտումների քննություններն իրականացվում են էթիկայի հանձնաժողովների կողմից, առկա են լինում այդպիսի քննությունների նշանակման և անցկացման ընթացակարգային և բովանդակային խախտումներ: Նշվածը, ըստ հարցվածների, պայմանավորվում է այն հանգամանքով, որ գերատեսչություններում ծառայողական քննություն նշանակելու իրավասություն ունեցող անձինք քննության նշանակման հիմքերում թույլ են տալիս այնպիսի սխալներ, որոնք անհնարին են դարձնում էթիկայի հանձնաժողովների կողմից հետագա քննության արդյունավետությունը:

- Միաժամանակ, արձանագրվել են դեպքեր, երբ Հանձնաժողովի սուբյեկտ հանդիսացող անձանց նկատմամբ հարցմանը մասնակցած մարմիններում նախաձեռնվել են քննություններ, այն դեպքում, երբ նման քննությունների իրականացման իրավասությունը բացառապես Հանձնաժողովինն է: Թեև քննությունների արդյունքում կայացված որոշումները հանրային պաշտոն զբաղեցնող համապատասխան անձանց կողմից չեն բողոքարկվել կամ վիճարկվել, այնուամենայնիվ, ոչ պատշաճ քննությունների իրականացման դեպքերը վկայում են այն մասին, որ մարմիններում առկա է լուրջ խնդիր՝ կապված իրավակարգավորումների մեկնաբանման և կիրառման հետ:

- Արձանագրվել են նաև դեպքեր, երբ մարմիններում քննություն է իրականացվել ոչ պատշաճ հիմքով: Մասնավորապես, տեղական ինքնակառավարման որոշ մարմիններում ծառայողական քննություններ են իրականացվել վարքագծի կանոնների խախտման հիմքով, այնինչ, մարմնի կողմից նկարագրված իրավիճակը վերաբերել է անհամատեղելիության պահանջների խախտմանը: Ըստ այդմ՝ մարմիններում առկա են խնդիրներ նաև բարեվարքության համակարգի տարրերի բովանդակության մեկնաբանման հետ:

Նկատի ունենալով, որ նախորդ տարիներին ևս արձանագրվել էին խնդիրներ և իրազեկման բացեր՝ ծառայողական քննությունների իրականացման գործընթացում բարեվարքության համակարգի տարրերի, իրավակարգավորումների մեկնաբանման և կիրառման շրջանակներում, հաշվետու տարում Հանձնաժողովը լայնածավալ աշխատանքներ է տարել իրազեկման բարձրացման առումով: Մեծ թվով հանրային ծառայողներ, այդ թվում՝ բարեվարքության հարցերով կազմակերպիչներ, մասնակցել են բարեվարքությանն առնչվող թիրախային դասընթացների, որոնք ներառել են նաև բարեվարքության համակարգի տարրերի խախտումների հիմքով քննությունների հետ կապված հարցեր: Թեև, ինչպես վերը նշվեց, աճել է ծառայողական քննությունների թիվը, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից իրականացված քննությունների թիվը, այդուհանդերձ, արձանագրված խնդիրները շարունակում են մնալ արդիական: Ուստի այս համատեքստում առաջանում է շահառու մարմինների, ինչպես նաև համապատասխան թիրախային խմբերի հետ հավելյալ աշխատանքների իրականացման անհրաժեշտություն:

Բարեվարքության համակարգի վիճակի վերաբերյալ 2025 թվականի տարեկան հաղորդմամբ՝ Հանձնաժողովն անդրադարձել է նաև ոլորտային օրենքներով սահմանված՝ հանրային ծառայողների բարեվարքությանն առնչվող նորմերի՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված նորմերին համապատասխանության և հնարավոր հակասություններին՝ ներկայացնելով դրանց լուծմանն ուղղված առաջարկները և Հանձնաժողովի մոտեցումները:

2. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ

2.1 Հայտարարագրերի ռեեստրի վարում

Հանձնաժողովը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ինչպես նաև կուսակցություններից հաշվետու ժամանակահատվածում ստացված 442 ծանուցումների (ռեեստրներ) հիման վրա հայտարարագրման էլեկտրոնային համակարգ (այսուհետ՝ Համակարգ) է մուտքագրել 1,451 հայտարարատու պաշտոնատար անձանց և կուսակցության ղեկավար մարմնի անդամների պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու վերաբերյալ տվյալներ, որոնք վերաբերել են 1,974 փոփոխությունների:

Վերը նշված փոփոխություններից 1060-ը եղել են պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, 914ը՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու մասին: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ

Համակարգում գրանցված գործող պաշտոնատար անձանց և կուսակցության ղեկավար մարմնի անդամների թիվը կազմել է 6,909:

2.2 Աջակցություն հայտարարատուներին

2026 թվականի 1-ին կիսամյակում հայտարարագրման գործընթացի վերաբերյալ հայտարարատուներին աջակցություն է տրամադրվել հետևյալ գործիքներով.


1. contact@cpcarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեի միջոցով ստացվել է շուրջ 1400 հարցում,
2. Chatwoot հարթակով ստացվել է 594 հարցում,
3. հեռախոսազանգերի թիվը կազմել է շուրջ 9000,

2025 թվականի տարեկան հայտարարագրերի ներկայացման վերջնաժամկետով պայմանավորված՝ հեռախոսազանգերի միջոցով 16.05.2026-31.05.2026 թթ. ընթացքում հայտարարատուներին աջակցություն է տրամադրվել նաև ոչ աշխատանքային օրերին:

2.3 Ներկայացված հայտարարագրեր

2026 թվականի առաջին կիսամյակի ընթացքում էլեկտրոնային եղանակով ներկայացվել է 17,549 հայտարարագիր, որից 7,110-ը՝ հայտարարատու պաշտոնատար անձանց, 9,385-ը՝ նրանց ընտանիքի անդամների, 1,054-ը՝ կուսակցության ղեկավար մարմնի անդամների կողմից: Հաշվետու ժամանակահատվածում հայտարարագիրն էլեկտրոնային համակարգով ներկայացնելու անհնարինության պայմանավորված ոչ էլեկտրոնային (թղթային) տարբերակով ներկայացվել է 72 հայտարարագիր:

Հայտարարատուների կողմից հայտարարագրերի ներկայացման վիճակագրությունը նախորդող համապատասխան ժամանակահատվածների համեմատության ներկայացված է ստորև.




Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ 2025 թվականի տարեկան հայտարարագիր ներկայացնելու պարտականություն են ունեցել 6,236 պաշտոնատար անձինք, որոնցից 6,212-ը ներկայացրել են 2025 թվականի տարեկան հայտարարագրերը, իսկ մնացած 24 պաշտոնատար անձանց ուղարկվել են գրավոր ծանուցումներ՝ հայտարարագրերը այդ ծանուցումներով տրամադրված 30-օրյա ժամկետում ներկայացնելու, իսկ չներկայացնելու դեպքում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ նախաձեռնվելու մասին:

Վերոնշյալ 24 անձանցից՝ 17-ն ավագանու անդամներ են, 3-ը՝ Պետական եկամուտների կոմիտեի աշխատակիցներ, 1 անձ՝ Քննչական կոմիտեից, 1 անձ՝ Երևան համայնքի վարչական շրջանի ղեկավարի տեղակալ, 1-ը համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, 1-ը՝ համայնքի ղեկավար:

Ստորև ներկայացվում է պաշտոնատար անձանց կողմից տվյալ տարվա ընթացքում ներկայացման ենթակա տարեկան հայտարարագրերի չներկայացման միտումները՝ 2023-2026 թվականների առաջին կիսամյակների վերջի դրությամբ.


Պաշտոնատար անձանց կողմից տվյալ տարվա ընթացքում ներկայացման ենթակա տարեկան հայտարարագրերի չներկայացման միտումները՝ 2023-2026 թվականների առաջին կիսամյակների վերջի դրությամբ



Ինչ վերաբերում է հայտարարատու պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների կողմից տվյալ տարվա ընթացքում ներկայացման ենթակա տարեկան հայտարարագրերի չներկայացման դեպքերին, ապա դրանց դինամիկան ևս նվազման միտում ունի նախորդ տարիների նույն ժամանակահատվածների (1-ին կիսամյակների) համեմատությամբ:

Պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների կողմից տվյալ տարվա ընթացքում ներկայացման ենթակա տարեկան հայտարարագրերի չներկայացման միտումները՝ 2023-2026 թվականների առաջին կիսամյակների վերջի դրությամբ ներկայացված են ստորև.

Պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների կողմից տվյալ տարվա ընթացքում ներկայացման ենթակա տարեկան հայտարարագրերի չներկայացման միտումները՝ 2023-2026 թվականների առաջին կիսամյակների




Կուսակցության ղեկավար մարմնի անդամներից 2025 թվականի տարեկան հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցել են 702-ը, որոնցից 594-ը սահմանված ժամկետում ներկայացրել է պահանջվող հայտարարագրերը, իսկ մնացած 108 պաշտոնատար անձանց կողմից հայտարարագրերը չներկայացնելու առնչությամբ ուղարկվել են գրավոր ծանուցումներ՝ հայտարարագրերը այդ ծանուցումներով տրամադրված 30-օրյա ժամկետում ներկայացնելու, իսկ չներկայացնելու դեպքում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ նախաձեռնվելու մասին:

Վերոնշյալին զուգահեռ իրականացվել է մշտադիտարկում՝ վեր հանելու պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների կողմից ընթացիկ և նախորդ տարիներին չներկայացված հայտարարագրերի վերաբերյալ տվյալները, որոնց թիվը կազմել է շուրջ 5,000: Վարչությունը վարչական վարույթներ նախաձեռնելուն զուգահեռ հեռախոսազանգերի միջոցով հայտարարատուներին տեղեկացրել է հայտարարագրերի ներկայացման պարտականության մասին:

Արդյունքում, ապահովվել է նախորդ տարիների չներկայացված 2,121 հայտարարագրերի հավաքագրում, որոնցից 278-ը ներկայացվել են պաշտոնատար անձանց կողմից, 1,449-ը՝ պաշտոնատար անձանց ընտանիքի անդամների, իսկ 394-ը՝ կուսակցության ղեկավար մարմնի անդամների կողմից:

Ստորև ներկայացվում է նախորդ տարիներին չներկայացված հայտարարագրերի հավաքագրման միտումները ըստ տարիների (տվյալներում ներառված չեն տարվա ընթացքում օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ ներկայացված պաշտոնական պարտականություններն ստանձնելու և դադարեցնելու հայտարարագրերի ներկայացման դեպքերը): Չներկայացրած հայտարարագրերի թվաքանակի նվազման միտումը պայմանավորված է ձեռնարկված իրազեկման և վարչական միջոցների արդյունավետությամբ, ինչի շնորհիվ էապես կրճատվել է դրանց քանակը:

2023-2026թթ. 1-ին կիսամյակների ընթացքում չներկայացված
հայտարարագրերի միտումները՝ ըստ տարիների



Իրականացված վարչարարության արդյունքում մեծամասամբ ներկայացվել են պահանջվող հայտարարագրերը մինչև վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության ավարտը:

Հաշվետու ժամանակահատվածում հայտարարագրերն օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու առնչությամբ նախաձեռնվել է 112 վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ:

2.4 Հայտարարագրված տվյալների փոփոխություններ

2026 թվականի առաջին կիսամյակում ստացվել է հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ 343 դիմում, որից 275 դիմումը ստացվել է հայտարարատու պաշտոնատար անձանց, իսկ 68-ը՝ նրանց ընտանիքի անդամների կողմից: Միաժամանակ իրականացվել է 2025 թվականի դեկտեմբերին ստացված 40 դիմումների (որից 35 պաշտոնատար անձ, 5՝ ընտանիքի անդամներ) հայտարարագրերում տվյալների փոփոխման գործընթացը: Արդյունքում.

- 262 դիմումներ բավարարվել են,
- 6 դիմումով ներկայացված տվյալները հայտարարագրման ենթակա տվյալներ չհանդիսանալու հիմքով վերադարձվել են դիմումատուներին,
- 5 դիմումներ մերժվել են փոփոխվող տվյալների՝ Հանձնաժողովին այլ կերպ հայտնի դառնալու հիմնավորմամբ: Մասնավորապես, որոշ դեպքերում մամուլի

մշտադիտարկումների արդյունքում կամ սեփական նախաձեռնությամբ փոփոխման ենթակա հայտարարագրերը գտնվել են Հանձնաժողովի ուսումնասիրության ներքո, իսկ որոշ դեպքերում դրանք հանդիսացել են արտավարության փաստաթղթեր,

- 110 դիմումների հիման վրա փոփոխության գործընթացն ընթացիկ փուլում է:

3. ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Հայտարարգրերի ստուգում

Հաշվետու ժամանակահատվածում ԶԼՄ մոնիթորինգի արդյունքում հայտնաբերված հրապարակումներում, անհամատեղելիության պահանջների մշտադիտարկման, բարեվարքության վերաբերյալ իրականացված ուսումնասիրությունների արդյունքում, քաղաքացու դիմումի և պետական մարմիններից ստացված գրությունների հիման վրա նախաձեռնվել են 140 պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների հայտարարագրերի վերաբերյալ ուսումնասիրություն՝ ստուգելու առերևույթ սխալ կամ ոչ ամբողջական հայտարարագրված տվյալներին առնչվող փաստերը:

Միաժամանակ, շարունակվել են դրան նախորդող ժամանակահատվածում վերը նշված հիմքերով նախաձեռնված 165 պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների հայտարարագրերի ուսումնասիրությունները: Արդյունքում, 2026 թվականի առաջին կիսամյակում ավարտվել են 123 հայտարարատուների (պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամներ) 401 հայտարարագրերի համապատասխան տվյալների ստուգումներ, որոնցից՝

1. 26 հայտարարատուների նկատմամբ հետագա գործընթաց չի նախաձեռնվել՝ հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունների բնույթը, Հանձնաժողովի կասկածների փարատված լինելու հանգամանքը, ինչպես նաև հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքների բացակայությունը,
2. 86 հայտարարատուների հայտարարագրերի ստուգմամբ արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ հայտարարատուներին առաջարկվել է Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմումներ՝ հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունների բնույթը, վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետների սպառված լինելը, Հանձնաժողովի կասկածների փարատված լինելու հանգամանքը, ինչպես նաև

հայտարարագրերի վերլուծության համար նշանակություն ունեցող հանգամանքների բացակայությունը,

3. 6 դեպքով (2 պաշտոնատար անձ և նրանց ընտանիքի անդամներ) որոշվել է իրականացնել Հանձնաժողով ներկայացված բոլոր հայտարարագրերի վերլուծություն (համալիր վերլուծություն),
4. 1 դեպքով Հանձնաժողովը որոշել է տեղեկություններ ներկայացնել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքից բխող գործողություններ իրականացնելու նպատակով, իսկ երկու անձանց մասով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում իրականացվել է ներկայացրած բոլոր հայտարարագրերի ստուգում և առերևույթ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկությունները փոխանցվել է օպերատիվ-հետախուզական մարմիններին:
5. 1 դեպքով նախաձեռնվել է վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ, արդյունքում կիրառվել է բանավոր դիտողություն:
6. 1 դեպքով կուսակցության ղեկավար մարմնի անդամի կողմից կուսակցությանը կատարված նվիրատվությունն առերևույթ չի հիմնավորվել վերջինիս կողմից Հանձնաժողով ներկայացված տարեկան հայտարարագրում հայտարարագրված տվյալներով, նույնիսկ առանց նվիրատվության գումարը հաշվարկում ներառելու դեպքում հայտարարատուի ընթացիկ տարեկան ծախսը կազմել է բացասական մեծություն, որի վերաբերյալ հաղորդում է ներկայացվել Գլխավոր դատատախտություն: Նշված անձի վերաբերյալ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 444-րդ հոդվածի 2-րդ մասով:

Ընթացիկ մյուս ուսումնասիրությունների առնչությամբ հայտարարատուներից հայցվել են պարզաբանումներ կամ այլ անձանց կատարվել են լրացուցիչ հարցումներ, որոնք դեռևս չեն ստացվել կամ գնահատման փուլում են: 1 դեպքով հայտարարագրերի ստուգման ընթացքում առերևույթ ձևավորված հիմնական կասկածի՝ հայտարարատուների կողմից ներկայացված գույքի, եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալներն առերևույթ ամբողջական և արժանահավատ չլինելու, իսկ հայտարարագրված դրամական միջոցների ծագումը Հանձնաժողովին հասանելի օրինական եկամուտներով ողջամտորեն չհիմնավորվելու, ինչպես նաև հայտարարատուներին պատշաճ ծանուցելու, պարզաբանումներ պահանջելու և հայտարարագրերում առկա առերևույթ անհամապատասխանությունները պարզելու ուղղությամբ Հանձնաժողովի կողմից ձեռնարկված բոլոր հնարավոր և օրենսդրությամբ նախատեսված միջոցները սպառված լինելու հիմքով, Հանձնաժողովը ստուգման գործընթացի վերաբերյալ կազմված նյութերն ուղարկել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ դրանց հետագա իրավական ընթացքն ապահովելու նպատակով:

3.2 Հայտարարագրերի վերլուծություն

Հաշվետու ժամանակաշրջանում ավարտվել է 8 հայտարարատուների 24 հայտարարագրերի վերլուծություն, որից՝

1. 8 հայտարարատուների 24 հայտարարագրերի վերլուծությունն ավարտվել է՝ գույքային դրության արժանահավատության վերաբերյալ կասկածները փարատվելու (այդ թվում՝ գույքային դրության վերաբերյալ ներկայացված տվյալների անարժանահավատությունը հիմնավորող բավարար հիմքերի բացակայության) հանգամանքով, ինչպես նաև վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու հիմքերի բացակայությամբ պայմանավորված: Վերլուծության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների առնչությամբ հայտարարատու անձանց առաջարկվել է Հանձնաժողով ներկայացնել հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում, ընդ որում՝

1.1. 3 հայտարարատուների 8 հայտարարագրերի վերլուծությունն ավարտվել է և հայտարարատուների նկատմամբ հետագա գործընթաց չի նախաձեռնվել՝ հաշվի առնելով արձանագրված անհամապատասխանությունների բնույթը, ինչպես նաև որոշ դեպքերով արձանագրված անհամապատասխանությունների՝ Հանձնաժողովի նախադեպային որոշումների համաձայն նվազ նշանակության իրավախախտում հանդիսանալու փաստը,

1.2. 5 հայտարարատուների 16 հայտարարագրերի վերլուծությունն ավարտվել է և հայտարարատուներին առաջարկվել է համապատասխան հայտարարագրերում ուղղում կատարելու համար դիմում ներկայացնել Հանձնաժողով՝ հաշվի առնելով վարչական տույժ նշանակելու վաղեմության ժամկետների սպառված լինելու հանգամանքը,

2. 77 հայտարարատուների հայտարարագրերի վերլուծությունն ընթացքի մեջ է, որոնց առնչությամբ արձանագրվում են պարզաբանման ենթակա հարցերը կամ հայցված և ստացված պարզաբանումները գնահատման փուլում են:

3.3 Օրենսդրական փոփոխություններ և նախաձեռնություններ

2026 թվականի մարտի 4-ին «Հանրային ծառայության մասին» օրենքում կատարվել են լրացումներ և փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել 2026 թվականի ապրիլի 9-ից: Սահմանվել է, որ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 77-րդ հոդվածով սահմանված՝ էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամները հանդիսանում են հայտարարատու պաշտոնատար անձինք, և օրենքն ուժի մեջ մտնելու պահին գործող՝ դատավոր չհանդիսացող անդամները և «Հանրային ծառայության մասին» օրենքի իմաստով նրանց ընտանիքի անդամները Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում միայն պաշտոնական պարտականությունները դադարեցնելու և տարեկան հայտարարագրեր:

2026 թվականի մարտի 25-ին «Հանրային ծառայության մասին» օրենքում կատարվել են լրացումներ և փոփոխություն, որոնք ուժի մեջ են մտել 2026 թվականի ապրիլի 26-ից: Ի թիվս այլնի, սահմանվել է, որ օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված խորհրդականները օրենքով նախատեսված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով են ներկայացնում գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր:

4. ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՏՎՈՂՈՒԹՅՈՒՆ

Սույն բաժնում ամփոփված են 2026 թվականի առաջին կիսամյակում իրականացված հիմնական աշխատանքները՝ կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության ոլորտում: Մասնավորապես՝ ներկայացվել են իրականացված օրենսդրական փոփոխությունները, կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունների պարտադիր աուդիտի գործընթացի կազմակերպման և իրականացման արդյունքները, կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման ընթացքը և դրա իրավական հիմքերը, կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ներկայացման գործընթացը, ինչպես նաև Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում իրականացված աշխատանքները:

4.1 Օրենսդրական փոփոխություններ և նախաձեռնություններ

2025 թվականի ապրիլի 1-ից ուժի մեջ է մտել ««Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» սահմանադրական օրենքը: Վերոգրյալ օրենսդրական փոփոխություններով պայմանավորված՝ իրականացվել են նաև համապատասխան փոփոխություններ ենթաօրենսդրական ակտերում, մասնավորապես՝

1. 2026 թվականի փետրվարի 27-ին ընդունվել է ««Կուսակցության տարեկան հաշվետվության ձևը, դրա լրացման և հրապարակման կարգը, հրապարակման ոչ ենթակա տվյալների ցանկը, ինչպես նաև տարեկան հաշվետվությունը Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնելու կարգը սահմանելու մասին» 2022 թվականի հուլիսի 22-ի N 04-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 01-Ն որոշումը: «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 2022 թվականի հուլիսի 22-ի N 04-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 2025 թվականի հոկտեմբերի 27-ին որոշումով լրացվել են «Զթույլատրված աղբյուրներից ստացված նվիրատվություններ» և «Ֆիզիկական անձանցից ստացված՝ օրենքով սահմանված չափը գերազանցող և օրենքով սահմանված ժամկետում չվերադարձված կամ պետական բյուջե չփոխանցված, ինչպես նաև չթույլատրված աղբյուրներից ստացված և օրենքով սահմանված ժամկետում պետական բյուջե չփոխանցված նվիրատվություններ» վերտառությամբ աղյուսակներ և «Ծանոթագրություն 6» վերտառությամբ առանձին թերթ, որը ընդգրկում է «6.1 Այլ մուտքերի բացվածք» և «6.2 Այլ ելքերի բացվածք» վերտառությամբ աղյուսակները, ինչը հնարավորություն է ստեղծել, որ կուսակցությունների տարեկան հաշվետվությունների «Մուտքեր Ելքեր» թերթում առկա «Այլ մուտքեր» և «Այլ ելքեր» տողերը լրացնելիս նաև ներկայացվեն դրանց առանձին բացվածքները: Վերոգրյալ օրենսդրական փոփոխությամբ սահմանվել են այդ աղյուսակներում լրացվող տվյալների հրապարակման ոչ ենթակա տվյալները: Սույն որոշումը պաշտոնապես հրապարակվել է 2026 թվականի մարտի 12-ին և ուժի մեջ մտել պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

2. 2026 թվականի փետրվարի 27-ին ընդունվել է ««Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամների գույքի և եկամուտների հայտարարագրերի ձևանմուշները և հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը սահմանելու մասին» 2022 թվականի հունիսի 17-ի N 03-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» N 02-Ն որոշումը: Իրականացված փոփոխությունների արդյունքում համապատասխան հայտարարագրերի ձևանմուշներում լրացվել են կրիպտոակտիվների, այդ թվում նաև՝ փաստացի տիրապետվող կրիպտոակտիվների հայտարարագրման համար անհրաժեշտ նոր

ենթաբաժիններ: Դրանով հնարավորություն է ստեղծվել, որպեսզի հայտարարատու պաշտոնատար անձինք հայտարարագրեն օրենքով պահանջվող տվյալները: Սույն որոշումը պաշտոնապես հրապարակվել է 2026 թվականի մարտի 4-ին և ուժի մեջ մտել պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Մշակվել է «Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման կարգը սահմանելու մասին» որոշման նախագիծը, որը դրվել է հանրային քննարկման և ուղարկվել շահագրգիռ մարմիններին՝ առաջարկություններ ներկայացնելու նպատակով: Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ ստացվել են ամբողջական առաջարկությունները, որոնք ամփոփվել են և առաջիկայում որոշման նախագիծը կուղարկվի պետաիրավական փորձաքննության: Ստուգման կարգի հաստատումը հնարավորություն կտա ապահովել Հանձնաժողովի վերահսկողական գործառույթների իրականացումը, բոլոր կուսակցությունների դեպքում կիրառելով նույն սկզբունքը, ինչպես նաև բարձրացնել կուսակցությունների կողմից ներկայացվող հաշվետվությունների ստուգման ամբողջականությունը և արժանահավատությունը: Այն նպատակ ունի ապահովել օրենքով սահմանված վերահսկողական լիազորությունների գործնական իրագործումը՝ հստակեցնելով ստուգման իրականացման հիմքերը, փուլերը, մեթոդները, տվյալների հավաքագրման և գնահատման կարգը: Նախագիծը բխում է ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրի 1.17 «Մեծացնել կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների արդյունավետությունը» գործողությունից:

Միաժամանակ, Հանձնաժողովի գործունեության ընթացքում ի հայտ եկած խնդիրների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների առաջարկությունների հիման վրա ամփոփվել և ՀՀ արդարադատության նախարարություն են ներկայացվել մի շարք օրենսդրական առաջարկներ՝ «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ կատարելու նախագծերի փաթեթում ներառելու նպատակով: Դրանք, մասնավորապես, վերաբերում են կուսակցություններին նվիրատվություններ կատարած անձանցից իրավիճակային հայտարարագրեր պահանջելու, հաշվետվությունների ստուգման ընթացքում օպերատիվ-հետախուզական տեղեկություններ ստանալու նպատակով իրավասու մարմիններին դիմելու լիազորության օրենսդրական ամրագրմանը, կուսակցությունների կողմից խոշոր չափերով կանխիկ դրամական միջոցների շրջանառության քրեականացմանը, ինչպես նաև մի շարք այլ կարգավորումների ներդրմանը:

4.2 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտ

«Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն 123 կուսակցություն Հանձնաժողով է ներկայացրել 2025 թվականի տարեկան հաշվետվություն, որոնց ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ բացի պետական ֆինանսավորման ենթակա 5 կուսակցություններից, հաշվետու տարվա ընթացքում կուսակցության մուտքերը կամ ելքերն օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհինգհազարապատիկը գերազանցելու հիմքով աուդիտի ենթակա են նաև «Հայաստանի Հանրապետական», «Հայրենիք» և «Առաջ աջակենտրոն» կուսակցությունների տարեկան հաշվետվությունները:

Վերը նշված 8 կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտի գործընթացը կազմակերպելու նպատակով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ-ին անդամակցող աուդիտորական կազմակերպություններից ստացվել են ստորև նշված գնային առաջարկները.

N	Կուսակցության անվանումը	Աուդիտորական կազմակերպության անվանումը	
		ԹՄ ԱՌԻԴԻՏ (ՀՀ դրամ)	ԹԴԱՍԹ ԱՌԻԴԻՏ (ՀՀ դրամ)
1	«Վերածնվող Հայաստան»	1,440,000	1,500,000
2	«Հայ Յեղափոխական Դաշնակցություն»	3,960,000	3,600,000
3	«Բարգավաճ Հայաստան»	3,000,000	1,800,000
4	«Հանրապետություն»	1,920,000	2,000,000
5	«Քաղաքացիական պայմանագիր»	8,880,000	7,800,000
6	«Հայաստանի Հանրապետական»	4,440,000	4,200,000
7	«Հայրենիք»	3,060,000	2,400,000
8	«Առաջ աջակենտրոն»	1,920,000	1,500,000

Ներկայացված առաջարկների հիման վրա սահմանված մեթոդաբանությամբ որոշվել է յուրաքանչյուր կուսակցության տարեկան հաշվետվության աուդիտի պայմանագրի գինը և 2026 թվականի փետրվարի 27-ին, 2026 թվականի մարտի 3-ին և 2026 թվականի մարտի 6-ին Հանձնաժողովի կայքում հրապարակվել է «*Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների աուդիտի կազմակերպման նպատակով աուդիտորական կազմակերպությունների ընտրության բաց մրցույթի հայտարարությունը հաստատելու մասին*» որոշումները, համաձայն որոնց՝ Հանձնաժողովը հայտարարել է մրցույթ՝ վերոնշյալ 8 կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունների պարտադիր աուդիտի իրականացման համար աուդիտորական կազմակերպությունների ընտրության նպատակով:

Ներկայացված մրցութային առաջարկների բացման արդյունքում յուրաքանչյուր կուսակցության տարեկան հաշվետվության աուդիտի իրականացման համար վիճակահանության փուլ են անցել 2 աուդիտորական կազմակերպություններ, որոնց միջև տեղի ունեցած հրապարակային վիճակահանության արդյունքում սահմանվել են վերջնական հաղթող կազմակերպությունները և վերջիններիս առաջարկվել է կնքել աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագրեր, ինչի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև.

N	Աուդիտորական կազմակերպության անվանում	Կուսակցության անվանում	պայմանագրի արժեք (ՀՀ դրամ)
1	«ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	«Վերածնվող Հայաստան»	1,470,000
2	«ԹԴԱՍԹ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	«Հայ յեղափոխական դաշնակցություն»	3,780,000
3	«ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	«Բարգավաճ Հայաստան»	2,400,000
4	«ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	«Հանրապետություն»	1,960,000
5	«ԹՄ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	«Քաղաքացիական պայմանագիր»	8,340,000
6	«ԹԴԱՍԹ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	«Հայաստանի հանրապետական»	4,320,000

7	«ԹՐԱՍԹ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	«Հայրենիք»	2,730,000
8	«ԹՐԱՍԹ ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ	«Առաջ աջակենտրոն»	1,710,000

Հաշվետու ժամանակաշրջանում աուդիտորական կազմակերպությունների կողմից ստացվել են պետական ֆինանսավորման և պարտադիր աուդիտի ենթակա կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունների աուդիտորական եզրակացությունները, որոնք հիմք են հանդիսացել պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման համար: Աուդիտորական եզրակացությունները հրապարակվել են Հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ [հետևյալ հղումով](#):

4.3 Կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգում

Կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության գործառնության համատեքստում Հանձնաժողովն իրականացրել է պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգումը, ինչի շրջանակներում անհրաժեշտ տեղեկություններ և փաստաթղթեր են հայցվել կուսակցություններից, որոնք համադրվել են պետական մարմիններից ստացված տեղեկությունների, ինչպես նաև կուսակցությունների տարեկան հաշվետվություններով ներկայացված տվյալների հետ: Ստուգման համար, ի թիվս վերոնշյալի, հիմք են հանդիսացել նաև աուդիտորական կազմակերպությունների կողմից տրված եզրակացությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ [«ՀՀ Ընտրական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»](#) սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 10-րդ մասով Հանձնաժողովին վերապահված գործառնության ապահովման շրջանակում պետական ֆինանսավորում ստացող կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման գործընթացն ամբողջությամբ համընկել է Ազգային ժողովի նախընտրական քարոզարշավի ժամանակահատվածի հետ, և առկա է եղել զգալի ծանրաբեռնվածություն՝ պայմանավորված օրենքով սահմանված վերահսկողական և հաշվետվողականության գործառնությունների իրականացման անհրաժեշտությամբ, միաժամանակ, կուսակցություններից և պետական մարմիններից հայցված վերջին տեղեկատվությունը ստացվել է 2026 թվականի հունիսի 9-ին, ինչպիսի հանգամանքներով պայմանավորված՝ Հանձնաժողովի 2026 թվականի հունիսի 9-ի **«Պետական ֆինանսավորում ստանալու իրավունք ունեցող կուսակցությունների 2025**

թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգելու մասին» որոշմամբ կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման ժամկետը երկարաձգվել է 60 (վաթսուն) օրով:

Պետական ֆինանսավորման իրավունք ունեցող կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգման գործընթացում Հանձնաժողովը, հաշվի առելով Ազգային ժողովի ընտրություններով պայմանավորված հանգամանքները, կուսակցությունների գործունեության արդյունավետության և դրամական միջոցները սեղմ ժամկետներում տրամադրելու նպատակահարմարությունից ելնելով՝ միջանկյալ ընդունել է պետական նպատակային ֆինանսավորման (կամ դրա մասնակի) տրամադրման հիմքերի առկայության վերաբերյալ համապատասխան որոշումներ:

2025 հաշվետու տարվա համար պետական ֆինանսավորումը կազմված է եղել երկու մասից՝ պետական ընդհանուր ֆինանսավորում՝ 80 տոկոսը և պետական նպատակային ֆինանսավորում՝ 20 տոկոսը: Ընդունված որոշումների համաձայն՝ պետական ֆինանսավորման ենթակա 5 կուսակցություններին տրամադրվել են նպատակային ֆինանսավորումներ, հետևյալ սահմանաչափերով՝

Կուսակցության անվանում	Տրամադրվող նպատակային ֆինանսավորում	Նպատակային ֆինանսավորում տրամադրելու հիմք	Տրամադրվող նպատակային ֆինանսավորման չափը (ՀՀ դրամ)
«Քաղաքացիական պայմանագիր»	3/4	Սահմանադրական և օրենքի 26-րդ հոդվածի 7-8-րդ մասեր	40,246,350 ՀՀ դրամ
«Հայ Յեղափոխական Դաշնակցություն»	կեսը	Սահմանադրական և օրենքի 26-րդ հոդվածի 8-րդ մաս	Պետական նպատակային ֆինանսավորման 3/4 կազմում է՝
«Վերածնվող Հայաստան»	1/4	Սահմանադրական և օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մաս	24,483,150 ՀՀ դրամ, որը տրամադրվելու է Հայաստան դաշինքին

<i>«Բարգավաճ Հայաստան»</i>	<i>ամբողջը</i>	<i>Սահմանադրական ն օրենքի 26-րդ հոդվածի 7-8-րդ մասեր</i>	<i>10,088,800 ՀՀ դրամ</i>
<i>«Հանրապետություն»</i>	<i>կեսը</i>	<i>Սահմանադրական ն օրենքի 26-րդ հոդվածի 7-րդ մաս</i>	<i>3,875,800 ՀՀ դրամ</i>

«Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցության 2025 թվականի տարեկան հաշվետվության ստուգման ընթացքում պարզվել է, որ կուսակցությանը պատկանող երեք անշարժ գույքեր հանձնվել են վարձակալության՝ 1,610,000 ՀՀ դրամով, ուստի պետական ֆինանսավորումը նվազեցվել է 1,610,000 ՀՀ դրամի չափով:

Այսպիսով պետական ֆինանսավորում ստացող 5 կուսակցությունների («Քաղաքացիական պայմանագիր», «Հայ յեղափոխական դաշնակցություն», «Բարգավաճ Հայաստան», «Հանրապետություն», «Վերածնվող Հայաստան»)՝ 2025 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգմամբ ընդունվել են որոշումներ՝ նպատակային ֆինանսավորումը մասամբ կամ ամբողջությամբ տրամադրելու հիմքերի առկայության մասին:

Հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ՝ պետական ֆինանսավորման ենթակա կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման գործընթացն ընթացքի մեջ է:

Միաժամանակ, 2025 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից նախաձեռնվել են առանձին կուսակցությունների տարեկան հաշվետվությունների ստուգումներ: Դրանք են՝ «Համահայկական ճակատ» և «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունների 2024 թվականի, «Ազգային օրակարգ» կուսակցության 2022-2024, «Ռամկավար ազատական» «Շանթ դաշինք» ազգայնական, «Հայաստանի Հանրապետական», «Գործարար», «Սահմանադրական իրավունք միություն», «Ապրելու երկիր», «Հաղթանակ», «Հայրենիք», «Հայաստանի եվրոպական», «Ուժը հայրենյաց» կուսակցությունների 2023-2024 թվականների տարեկան հաշվետվությունները:

Հաշվետվությունների ստուգման արդյունքերը Հանձնաժողովի նիստում քննարկելուց հետո, կուսակցություններին ուղարկվել էին տարեկան հաշվետվություններում շտկումներ կատարելու և ըստ անհրաժեշտության՝ պարզաբանումներ տրամադրելու համար համապատասխան գրություններ: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է վերոգրյալ կուսակցությունների կողմից տրամադրված պարզաբանումների գնահատում, ինչի արդյունքում «Ազատ

դեմոկրատներ», «Ազգային օրակարգ», «Շանթ դաշինք» ազգայնական և «Հաղթանակ» կուսակցություններին ուղարկվել են գրություններ՝ հաշվետվությունների ստուգման ավարտի վերաբերյալ: Բացի այդ, կուսակցությունների կողմից տրամադրված պարգաբանումների գնահատում արդյունքում՝ նախաձեռնվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ, մասնավորապես «Հայաստանի եվրոպական» կուսակցության 2023-2024 թվականների տարեկան հաշվետվությունների, «Համահայկական ճակատ» կուսակցության 2024 թվականի տարեկան և «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցության 2023-2024 թվականների տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքում կուսակցության պաշտոնատար անձանց նկատմամբ նախաձեռնվել է 5 վարույթ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 189.16-րդ հոդվածի համաձայն վարչական իրավախախտման դեպքով «Հայաստանի եվրոպական» կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ նախաձեռնվել է 2 վարույթ կուսակցության 2023 և 2024 թվականի տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքներով: Նույն հոդվածով վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ է նախաձեռնվել նաև «Համահայկական ճակատ» և «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցությունների պաշտոնատար անձանց նկատմամբ:

Օրենսգրքի 189.15-րդ հոդվածի համաձայն՝ նախաձեռնվել է 1 վարույթ՝ «Սահմանադրական իրավունք միություն» կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հանձնաժողովի որոշումները հրապարակվում են Հանձնաժողովի պաշտոնական կայքի համապատասխան բաժնում:

Վերոգրյալ ստուգումների արդյունքով, մեկ դեպքով գործի նյութերն ուղարկվել են Հակակոռուպցիոն կոմիտե՝ օպերատիվ ստուգում իրականացնելու նպատակով: Միաժամանակ կուսակցության տարեկան հաշվետվության ստուգման ընթացքում իրականացվել են նաև կուսակցությանը նվիրատվություն կատարած հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերի ուումնասիրություն, համաձայն որի՝ մեկ նվիրատուի պարագայում վերջինիս օրինական եկամուտներով չի հիմնավորվել կուսակցությանը կատարված նվիրատվությունը՝ որի հիման վրա գործի նյութերն ուղարկվել է Գլխավոր դատախազություն (ներկայացված է հայտարարագրերի ստուգման բաժնում):

2026 թվականի հունիսի 7-ին Ազգային ժողովի ընտրություններով պայմանավորված՝ «Ինֆորմացիոն կոմիտե» տեղեկատվական հասարակական կազմակերպության, «Անկանխ դիտորդ» հասարակական դաշինքի և «Ականատես» համատեղ դիտորդական առաքելության կողմից Հանձնաժողով են ներկայացվել

դիմումներ «Այանս» առաջադիմական ցենտրիստական, «Քրիստոնեա-ժողովրդավարական» և «Ժողովրդավարական համախմբում» կուսակցությունների կողմից իրականացված միջոցառումների, կատարված նվիրատվությունների և կուսակցությունների ֆինանսավորմանն առնչվող այլ հարցերի վերաբերյալ: Հանձնաժողովը, քննելով ներկայացված դիմումները, նախաձեռնել է «Ժողովրդավարական համախմբում», «Քրիստոնեա-ժողովրդավարական» և «Այանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունների 2021-2025 թվականների տարեկան հաշվետվությունների ստուգում:

Բացի այդ, ԶԼՄ-ում առկա հրապարակումների հիման վրա Հանձնաժողովը նախաձեռնել է նաև «Հայաստանի շնորհապետական» կուսակցության 2025 թվականի և «Ազգային ժողովրդավարական բևեռ» համահայկական կուսակցության 2021-2025 թվականների տարեկան հաշվետվությունների ստուգում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ կուսակցությունները մասնակցում էին Ազգային ժողովի ընտրություններին, ինչի արդյունքում նրանց ֆինանսական գործունեությունը գտնվում էր հանրային բարձր հետաքրքրության կենտրոնում:

«Հայաստանի շնորհապետական» կուսակցության 2025 թվականի, «Ժողովրդավարական համախմբում» և «Այանս» առաջադիմական ցենտրիստական կուսակցությունների 2021-2025 տարեկան հաշվետվությունների ստուգման արդյունքներով վերոնշյալ կուսակցություններին ուղարկվել են գրություններ տարեկան հաշվետվություններում շտկումներ կատարելու և պարզաբանումներ տրամադրելու համար, որոնց գնահատման արդյունքում ըստ անհրաժեշտության կնախաձեռնվեն համապատասխան գործողություններ: Մեկ կուսակցության ստուգման արդյունքներով հաղորդում է ներկայացվել Գլխավոր դատախազություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԶԼՄ հրապարակումների հիման վրա կանխիկ հոսքերի ներգրավումը և փաստացի գործունեության պայմաններում կուսակցության կողմից գրոյական հաշվետվությունների ներկայացումն առաջացնում է ռիսկեր:

«Քրիստոնեա-ժողովրդավարական» կուսակցության 2021-2025 տարեկան հաշվետվությունների ստուգումը հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ գտնվում է ընթացիկ փուլում:

4.4 Կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունների հրապարակում և ներկայացում

Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է ուսումնասիրություն՝ պարզելու կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունները Սահմանադրական օրենքով սահմանված կարգով Հանձնաժողով ներկայացնելու՝ պահանջների պահպանվածությունը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 127 կուսակցություններից օրենքով սահմանված ժամկետում 9 կուսակցություն («Միավորում հանուն Հայաստանի», «Հայք լիբերալ» «Հայաստանի հայ արիական», «Ազգային համաձայնություն», «Հանրային ձայն», «Հայաստանի եվրոպական», «Հանուն ժողովրդավար պետականության», «Միացյալ քրիստոնյա Հայաստան», «Արժանապատիվ ապագա») Հանձնաժողով չեն ներկայացրել իրենց 2025 թվականի տարեկան հաշվետվությունները, ուստի առերևույթ վարչական իրավախախտման դեպքերի առթիվ 8 կուսակցությունների պաշտոնատար անձանց նկատմամբ նախաձեռնվել են վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթներ՝ [Օրենսգրքի](#) 189.13-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, ինչի վերաբերյալ այդ պաշտոնատար անձանց ուղարկվել են գրավոր ծանուցումներ:

Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 1-ին մասով «[Հայաստանի եվրոպական](#)», «[Հանուն ժողովրդավար պետականության](#)», «[Միացյալ քրիստոնյա Հայաստան](#)» և «[Արժանապատիվ ապագա](#)» կուսակցությունների պարագայում ընդունվել են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը կարճելու վերաբերյալ որոշումներ, քանի որ մինչև վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը Հանձնաժողով է ներկայացվել այդ կուսակցությունների 2025 թվականի տարեկան հաշվետվությունները, իսկ «[Հայք լիբերալ](#)», «[Հանրային ձայն](#)», «[Միավորում հանուն Հայաստանի](#)» և «[Ազգային համաձայնություն](#)» կուսակցությունների դեպքում՝ ընդունվել են վարչական տույժ կիրառելու մասին որոշումներ:

Իսկ «Հայաստանի հայ արիական» կուսակցության պաշտոնատար անձի նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ չի նախաձեռնվել վերջինիս մահվան հիմքով:

Այսպիսով հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ 127 կուսակցություններից 123 կուսակցություններ ներկայացրել են իրենց 2025 թվականի տարեկան հաշվետվությունները, իսկ 4 կուսակցություններ (*«Միավորում հանուն Հայաստանի», «Հայք լիբերալ», «Ազգային համաձայնություն» և «Հայաստանի հայ արիական»*) Սահմանադրական օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողով չեն ներկայացրել իրենց 2025 թվականի տարեկան հաշվետվությունները, որոնց առնչությամբ համապատասխան ժամկետները լրանալուց հետո Օրենսգրքի 189.13-րդ հոդվածի 2-րդ մասով կնախաձեռնվեն վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթները:

4.5 Նախընտրական քարոզարշավի ընթացքում կուսակցությունների բանկային հաշիվների վերաբերյալ ամփոփ տեղեկանքների կազմում և հրապարակում

Համաձայն «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 10-րդ մասի՝ «*Ընտրություններին մասնակցող կուսակցությունների*

(կուսակցությունների դաշինքների) ընտրական ցուցակների գրանցման համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ մինչև քվեարկությունից հետո՝ երրորդ օրը՝ 3 աշխատանքային օրը մեկ, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների կազմում ընդգրկված կուսակցությունների) բանկային հաշիվների ֆինանսական միջոցների մնացորդի, մուտքերի և ելքերի վերաբերյալ տվյալները համապատասխան բանկերը ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ամփոփում է այդ տվյալները, կազմում ամփոփ տեղեկանք, որը տեղադրվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համացանցային կայքում»: Այս գործառույթի համատեքստում Հանձնաժողովը Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում ապահովել է կուսակցությունների բանկային հաշիվների վերաբերյալ ամփոփ տեղեկանքների նախապատրաստում և հրապարակում [Հանձնաժողովի պաշտոնական կայքում](#):

Հանձնաժողովի կողմից Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընթացքում հրապարակվել է 9 տեղեկանք, որոնցից յուրաքանչյուրը ներառել է տեղեկություններ ընտրություններին մասնակցող 22 կուսակցությունների («Ռեֆորմիստների», «Բոլորին դեմ եմ» ժողովրդավարական, «Ուժեղ Հայաստան», «Նոր դարաշրջան», «Միավորված հայեր», «Հայաստանի շնորհապետական», «Նոր ուժ» ռեֆորմիստական, «Միասնության թևեր», «Բարգավաճ Հայաստան», «Ազգային ժողովրդավարական բևեռ» համահայկական, «Քոչարի ազգային վերածնունդ և ազգի զարթոնք», «Հայ ազգային կոնգրես», «Հանրապետություն», «Քրիստոնեա-ժողովրդավարական», «Ալյանս» առաջադիմական ցենտրիստական, «Ժողովրդավարական համախմբում», «Դեմոկրատիա օրենք կարգապահություն», «Քաղաքացիական պայմանագիր», «Հայ յեղափոխական դաշնակցություն», «Առաջ աջակենտրոն», «Հանուն հանրապետության ժողովրդավարության պաշտպանների դաշինք», «Լուսավոր Հայաստան») բանկային հաշիվների վերաբերյալ: «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 27-րդ հոդվածի ուժով նախընտրական քարոզչության նախապատրաստման, կազմակերպման և իրականացման հետ կապված բոլոր ծախսերը պետք է կատարվեն բացառապես նախընտրական հիմնադրամի միջոցների հաշվին, իսկ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40.3-րդ հոդվածը վարչական պատասխանատվություն է սահմանում նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելու համար: Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 221.1-ին հոդվածով խոշոր չափի՝ 10 միլիոն ՀՀ դրամը գերազանցող գումարի դեպքում նախատեսված է քրեական պատասխանատվություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ նախընտրական քարոզարշավի ընթացքում Հանձնաժողովի կողմից արձանագրված բոլոր այն դեպքերում, երբ կուսակցությունների բանկային հաշիվներից կատարվել են ծախսեր, որոնք առերևույթ կարող էին ուղղված լինել նախընտրական քարոզչության իրականացմանը, դրանց վերաբերյալ համապատասխան տեղեկություններն ուղարկվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ հավաստիանալու, որ այդ ծախսերն արտացոլված են համապատասխան հայտարարագրերում և ներառված են նախընտրական ծախսերի թույլատրելի սահմանաչափի հաշվարկում:

Միաժամանակ, Ազգային ժողովի 2026 թվականի հերթական ընտրություններին մասնակցող կուսակցություններին կատարված 1,000,000 ՀՀ դրամի չափը գերազանցող նվիրատվությունների վերաբերյալ տվյալների արժանահավատությունն ստուգելու համար իրականացվել է կուսակցություններին նվիրատվություն կատարած 757 նվիրատուների և նրանց ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալների ստուգում, որի արդյունքում 202 անձի վերաբերյալ տեղեկություններ են ուղարկվել համապատասխան մարմին՝ իրականացնելու «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքից բխող գործողություններ՝ հնարավոր հանցագործությունները հայտնաբերելու և կանխելու նպատակով:

5.ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

5.1 Բարեվարքության եզրակացությունների և դրանց հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ տեղեկություններ

Հանձնաժողովը **2026** թվականի **1-ին** կիսամյակի ընթացքում բարեվարքության ուսումնասիրության լիազորության շրջանակներում իրականացրել է թվով **347** պետական պաշտոններում նշանակվել հավակնող անձանց (թեկնածուների) բարեվարքության ուսումնասիրություն և թվով **26** անձանց բարեվարքության ընթացիկ ուսումնասիրություն, ինչի արդյունքում համապատասխան մարմիններ է ներկայացվել ընդհանուր թվով **373** խորհրդատվական բնույթի եզրակացություն:


Հաշվետու ժամանակահատվածում ներկայացված թվով **373** եզրակացություններից **331**-ը եղել են դրական, **22**-ը՝ բացասական: Թվով **20** անձի բարեվարքության վերջնական գնահատական հնարավորություն չի եղել տրամադրել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված:




Ներկայացված եզրակացություններից՝

- 1-ը վերաբերել է Սահմանադրական դատարանի դատավորի թեկնածուին,
- 27-ը՝ դատավորների թեկնածուների հավակնորդներին,
- 120-ը՝ դատախազների թեկնածությունների ցուցակում ընդգրկվել հավակնող անձանց,
- 32-ը՝ դատախազների առաջխաղացման ցուցակում ընդգրկվել հավակնող դատախազներին,
- 4-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող անձանց,
- 6-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրել հավակնող անձանց,
- 3-ը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող, առաջխաղացման ենթակա անձանց,


- 62-ը՝ Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող, առաջխաղացման ենթակա անձանց,
- 89-ը՝ Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկել հավակնող անձանց
- 3-ը՝ Ներքին գործերի նախարարության ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության իրավասու ստորաբաժանումում պաշտոն զբաղեցնել հավակնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկել հավակնող անձանց,
- 26-ը՝ ընթացիկ ուսումնասիրությունն անցնելու պարտավորություն ունեցող քննիչներին



Բարելարքության եզրակացությունների հիման վրա կատարված նշանակումների վերաբերյալ թվային տվյալները ներկայացված են հաշվետվություն ներկայացնելու օրվա դրությամբ համապատասխան իրավասու մարմինների կողմից ստացված տեղեկատվության համաձայն:




Սահմանադրական դատարանի դատավորների թեկնածուների և դատավորների թեկնածուների հավակնորդների վերաբերյալ կազմված ընդհանուր թվով 28 եզրակացություններից 26-ը եղել են դրական, 1-ը՝ բացասական, թվով 1 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական հնարավորություն չի եղել տրամադրել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված: Դատավորների թեկնածուների նշանակումներ դեռևս առկա չեն:



Դատախազների թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 121 եզրակացություններից 107-ը եղել են դրական, համապատասխան ցուցակում ընդգրկվել է 23 թեկնածու, որից պաշտոնում նշանակվել են թվով 8-ը, թվով 7-ը՝ բացասական, նշանակումներ առկա չեն: Թվով 7 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների

ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված, թվով 1 թեկնածու ընդգրկվել է ցուցակում:


Դատախազների ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 32 եզրակացություններից 29-ը եղել են դրական, թվով 24-թեկնածու ընդգրկվել են առաջխաղացման ցուցակներում, այնուհետև նշանակվել են համապատասխան պաշտոններում, թվով 4 թեկնածուի ատեստավորումը դեռ չի ավարտվել, 1-ը՝ բացասական, թեկնածուն չի նշանակվել պաշտոնում: Թվով 1 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված, թեկնածուի ատեստավորումը դեռ չի ավարտվել:



Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 6 եզրակացություններն էլ եղել են դրական, թվով 1-ը նշանակվել է պաշտոնում:

Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 3 եզրակացություններից 2-ը եղել են դրական, թվով 2 թեկնածու ընդգրկվել է առաջխաղացման ցուցակներում, այնուհետև թվով 1-ը նշանակվել է համապատասխան պաշտոնում, թվով 1 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված, թեկնածուն ընդգրկվել է առաջխաղացման ցուցակում:

Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 4 եզրակացություններն էլ եղել են դրական, թվով 2 թեկնածու նշանակվել է պաշտոնում:



Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց թեկնածությունների ցուցակում ընդգրկվել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 89 եզրակացություններից 79-ը եղել են դրական, համապատասխան ցուցակում ընդգրկվել է 60 թեկնածու, որից պաշտոնում նշանակվել են թվով 27-ը, 7-ը՝ բացասական, համապատասխան ցուցակում ընդգրկվել է թվով 5 թեկնածու, որից պաշտոնում նշանակվել են թվով 1-ը, թվով 3 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված, համապատասխան ցուցակում ընդգրկվել է 2 թեկնածու, որից պաշտոնում նշանակվել է թվով 1-ը,

Քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող, ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկվել հավակնող թեկնածուների և Քննչական կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածուի վերաբերյալ կազմված բարեվարքության թվով 62 եզրակացություններից 55-ը եղել են դրական, համապատասխան ցուցակում ընդգրկվել է թվով 34 թեկնածու, որից պաշտոնում նշանակվել են թվով 25-ը, թվով 3-ը՝ բացասական, որից պաշտոնում նշանակվել է էվով 1 թեկնածու: Թվով 4 թեկնածուի բարեվարքության վերաբերյալ վերջնական գնահատական չի տրամադրվել Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով

պայմանավորված: Համապատասխան ցուցակում ընդգրկվել է թվով 3 թեկնածու, որից պաշտոնում նշանակվել է թվով 1-ը:


Միաժամանակ, Ազգային ժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 2-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել են «Ոստիկանության բարեվարքության և կարգապահական կանոնագիրք» օրենքը և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները, որոնցով սահմանվել են Ոստիկանության իրավասու ստորաբաժանումում, այն է՝ Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում առաջին անգամ ոստիկանության ծառայության պաշտոնի նշանակվելուց առաջ թեկնածուների՝ պարտադիր բարեվարքության ուսումնասիրություն անցնելու կարգավորումները:

Հիմք ընդունելով վերոգրյալ օրենսդրական փոփոխությունները, հաշվետու ժամանակահատվածում Ներքին գործերի նախարարություն է ներկայացրել թվով 3 բարեվարքության եզրակացություն:

Ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչությունում առաջին անգամ ոստիկանության ծառայության պաշտոնի նշանակվել հավակնող թեկնածուների վերաբերյալ կազմված թվով 3 բարեվարքության եզրակացություններից, որից թվով 2-ը եղել են դրական, 2-ն էլ նշանակվել են պաշտոններում, թվով 1-ը բացասական, թեկնածուն չի նշանակվել պաշտոնում:

5.2 Բարեվարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրության արդյունքներ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը շարունակում է բարեվարքության ընթացիկ ուսումնասիրության գործընթացը:



Հանձնաժողովը 2026 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում իրականացրել է ընդհանուր թվով 26 անձի բարելավարքության վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրություն:

Քննչական կոմիտե ներկայացված 26 եզրակացություններից՝ 21-ը եղել են դրական, 2-ը՝ բացասական, Հանձնաժողովի կողմից տրված թվով 2 բացասական եզրակացությունների հիման վրա ՆԱՎ-ում իրականացված նախնական ուսումնասիրությունները դադարեցվել են՝ կարգապահական կոպիտ խախտումների և կարգապահական վարույթ հարուցելու հիմքերի բացակայության պատճառաբանությամբ, թվով 1 թեկնածու ընդգրկվել է ցուցակում: Թվով 3 անձի բարելավարքության վերջնական գնահատական հնարավորություն չի եղել տրամադրել՝ Հանձնաժողովի անդամների ձայների հարաբերակցության հանգամանքով պայմանավորված:

Բարելավարքության ուսումնասիրության գործընթացի շրջանակներում պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերի ուսումնասիրության արդյունքում բացահայտված խնդիրների առնչությամբ 2026 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում կազմվել և համապատասխան ստորաբաժանում է ներկայացվել թվով 67 զեկուցագիր՝ հետագա գործընթացը կազմակերպելու նպատակով:

5.3 Օրենսդրական փոփոխություններ

Օրենսդրական փոփոխությունների իրականացումը շարունակվել է նաև 2026 թվականին: Մասնավորապես՝ 2026 թվականի մարտի 04-ին Ազգային ժողովի կողմից

ընդունվել են «Ազգային ժողովի կանոնակարգ», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքներում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքները, որոնցով էականորեն բարձրացրել է բարեվարքության գործընթացի հաշվետվողականությունը: Մասնավորապես, նախատեսվել է որոշակի պաշտոններում նշանակումներ կատարելուց հետո տվյալ անձանց բարեվարքության եզրակացությունների եզրափակիչ մասի հրապարակման պահանջ՝ անկախ դրա բացասական կամ դրական լինելու հանգամանքից: Այս փոփոխության իրականացման համատեքստում վերանայվել է նաև բարեվարքության ուսումնասիրության իրականացման գործընթացը՝ հնարավորություն տալով բարեվարքության վերաբերյալ բացասական եզրակացություն ստացող անձանց եզրակացության նախագծի վերաբերյալ ներկայացնել իրենց առարկությունները և լրացուցիչ հիմնավորող փաստաթղթերը: Միաժամանակ սահմանվել է, որ բարեվարքության վերաբերյալ վերջնական եզրակացությունը կազմվում է բացասական եզրակացության նախագծի և անձի կողմից ներկայացված առարկությունների համադրության արդյունքով: Նշյալ կարգավորումներն ուժի մեջ են մտել 2026 թվականի ապրիլի 6-ին:

Հարկ է նշել, որ օրենսդրական փոփոխությունների շրջանակներում էականորեն ընդլայնվել է բարեվարքության ուսումնասիրության ենթակա պաշտոնների ցանկը:

Մասնավորապես, բարեվարքության ուսումնասիրություն անցնելու պահանջ է սահմանվել Դատավորների ընդհանուր ժողովի **Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի դատավոր չհանդիսացող անդամների թեկնածուների, ինչպես նաև** Ներքին գործերի նախարարության ներքին անվտանգության և հակակոռուպցիոն վարչության իրավասու ստորաբաժանումում պաշտոն զբաղեցնել հավակնող անձանց համար:

Ձուգահեռաբար, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում կատարված լրացումների արդյունքում 26.04.2026 թվականից ուժի մեջ է մտել ՀՀ վարչապետի, փոխվարչապետների, նախարարների, ինչպես նաև նրանց խորհրդականների, այդ թվում՝ հասարակական հիմունքներով նշանակված խորհրդականների և նախարարի տեղակալների բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն իրականացնելու վերաբերյալ կարգավորումը, որի համաձայն՝ Հանձնաժողովը վերոնշյալ պաշտոնները զբաղեցնող անձանց կողմից պաշտոնեական պարտականությունների ստանձնման հայտարարագրերը ներկայացվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, պետք է իրականացնի նրանց բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրություն և համապատասխան անձին ներկայացնի բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական

եզրակացություն: Բարեվարքության ռիսկերի վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը ներառում է անձի գույքային դրության և մասնավոր շահերի տեսանկյունից հնարավոր ռիսկերը և դրանց չեզոքացմանն ուղղված առաջարկությունները:

*6. ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱԼԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԸ*

Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում իր լիազորությունների շրջանակներում շարունակել է վարույթների իրականացումը: Հանձնաժողովի կողմից ընդհանուր առմամբ իրականացվել են թվով **146** վարույթներ, որոնցից՝

ՎԻՎ օրենսգրքով նախատեսված՝ **139** վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ.

- ✓ Հայտարարագիր չներկայացնելու հիմքով՝ **123** վարույթ,
- ✓ Հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու իրավախախտման հիման վրա՝ **1** վարույթ,
- ✓ Կուսակցությունների հաշվետվությունները չներկայացնելու հիմքով՝ **9** վարույթ,
- ✓ Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված փաստաթղթերը պետական լիազոր մարմնին չտրամադրելու իրավախախտման հիման վրա՝ **1** վարույթ,
- ✓ Կուսակցությանն օրենքով սահմանված նվիրատվությունները կամ կուսակցության կողմից դրամական վճարումների հաշվարկները անկանխիկ չկատարելու իրավախախտման հիման վրա՝ **1** վարույթ,
- ✓ Կուսակցությունների կողմից օրենքով սահմանված չափից ավելի կամ չթույլատրված նվիրատվություններն օրենքով սահմանված ժամկետներում պետական բյուջե կամ նվիրատուին չփոխանցելու իրավախախտման հիման վրա՝ **4** վարույթ:

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 27-րդ հոդվածով նախատեսված՝ **7** վարույթ.

- ✓ Անհամատեղելիության պահանջների առերևույթ խախտումների հիմքով՝ **1** վարույթ,
- ✓ Վարքագծի կանոնների առերևույթ խախտումների հիման վրա՝ **6** վարույթ:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կողմից իրականացված վարույթներից 30-ը եզրափակվել են վարչական տույժ նշանակելու մասին որոշման

ընդունմամբ, իսկ մյուսները՝ բանավոր դիտողություն հայտարարելով և կարճելով վարչական վարույթը: Վարույթներից մի մասը դեռ գտնվում են ընթացիկ փուլում: Հարկ է նշել, որ իրականացված վարույթների արդյունքում հաշվետու ժամանակահատվածի ընթացքում կիրառվել է ընդհանուր առմամբ **5,110,000 ՀՀ դրամի** չափով վարչական տույժ: Հաշվետու ժամանակահատվածում պետությանը հատուցվել է ընդհանուր առմամբ՝ **4,593,398 ՀՀ դրամ**:

2026 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների և եզրակացությունների վերաբերյալ ՀՀ վարչական դատարան է ներկայացվել թվով 13 հայցադիմում, բոլորն ընդունվել են վարույթ դատարանի կողմից և գտնվում են ընթացիկ քննության փուլում:

7. ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

2026 թվականի առաջին կիսամյակում Հանձնաժողովը շարունակել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքները՝ նպատակ ունենալով ապահովել հանրային իշխանության մարմիններում և օրենքով սահմանված կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման և կառավարման միասնական մեխանիզմների ներդրումը:

2026 թվականի հունվարի 20-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքը, որով Հանձնաժողովին վերապահվել են հանրային իշխանության մարմիններում, ինչպես նաև օրենքով սահմանված մի շարք հանրային նշանակության կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության հաստատման, կոռուպցիոն ռիսկերի գնահատումներ իրականացնելու, գնահատման արդյունքների հրապարակման, արձանագրված խնդիրների վերացմանն ուղղված առաջարկությունների ներկայացման և մասնագիտական խորհրդատվության տրամադրման լիազորությունները:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի կիրառման շրջանակում ընդգրկվել են հանրային իշխանության մարմինները, առողջապահության, սոցիալական պաշտպանության, շրջակա միջավայրի պահպանության, փորձագիտական գործունեության, կառուցապատման և ներդրումային ծրագրերի ապահովման ոլորտներում

գործունեություն իրականացնող կամ վերջին երեք տարվա ընթացքում պետական բյուջեից սուբսիդիաներ կամ դրամաշնորհներ ստացած պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները, պետության կողմից հիմնադրված հիմնադրամները, ինչպես նաև հիսուն և ավելի տոկոս պետական և (կամ) համայնքային մասնակցություն ունեցող առևտրային կազմակերպությունները:

Օրենքի անցումային դրույթներին համապատասխան՝ հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության մշակման աշխատանքները: Մշակված նախագիծը սահմանված կարգով շրջանառության է ներկայացվել իրավասու պետական մարմիններում՝ դիտարկումների և առաջարկությունների ստացման նպատակով, ինչպես նաև ներկայացվել է հանրային քննարկման՝ ապահովելու շահագրգիռ կողմերի մասնակցությունը և մեթոդաբանության կիրառելիության վերաբերյալ առաջարկությունների հավաքագրումը:

Մեթոդաբանության նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով միջազգային լավագույն փորձը, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից նախորդ տարիներին իրականացված փորձնական գնահատումների արդյունքները:

Նախագծով սահմանվում են կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործընթացի կազմակերպման, իրականացման և արդյունքների ամփոփման միասնական մոտեցումները՝ ապահովելով գնահատման գործընթացի թափանցիկությունը, կանխատեսելիությունը, փաստահենությունը և մեթոդաբանական միասնականությունը:

Մեթոդաբանությամբ սահմանվում են նաև գնահատվող գործընթացների, մարմինների և կազմակերպությունների ընտրության հիմքերը, գնահատման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման մեթոդները, հարցաշարերի մշակման և կիրառման միասնական պահանջները, աշխատանքային խմբերի ձևավորման մոտեցումները, հարցաշարերի պատասխանների նախնական և խորքային վերլուծության փուլերը, լրացուցիչ գնահատման մեթոդների կիրառման հիմքերը, կոռուպցիոն ռիսկերի հավանականության և ազդեցության գնահատման չափորոշիչները, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավման սկզբունքները, ինչպես նաև գնահատման արդյունքների ամփոփման, քննարկման և հրապարակման ընթացակարգերը:

Միաժամանակ մեթոդաբանությամբ ընդգծվում է, որ կոռուպցիոն ռիսկերի գնահատումը չի հանդիսանում վերահսկողական կամ պատժիչ գործիք, այլ ուղղված է պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների հետ համագործակցային միջավայրում առկա խոցելիությունների բացահայտմանը, կառավարման գործընթացների և բարելավարքության համակարգերի կատարելագործմանը:

Մեթոդաբանության մշակման աշխատանքներին զուգահեռ՝ հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են նաև կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործնական կիրառման աշխատանքները՝ պիլոտային գնահատումների իրականացման միջոցով: Պիլոտային գնահատումները նպատակ են ունեցել փորձարկել մշակվող մեթոդաբանական մոտեցումները, գնահատման գործիքակազմի կիրառելիությունը, ինչպես նաև բացահայտել դրա հետագա կատարելագործման հնարավորությունները:

2025 թվականին Հանձնաժողովի կողմից իրականացված հինգ խոշոր պետական մասնակցությամբ ընկերությունների՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի, «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի, «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի և «Ջրառ» ՓԲԸ-ի կոռուպցիոն ռիսկերի գնահատումների շրջանակում 2026 թվականի առաջին կիսամյակում շարունակվել են գնահատման արդյունքների վերջնականացման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է ներկայացված փաստաթղթերի և հարցաշարերի պատասխանների խորքային վերլուծություն, ամփոփվել են նույնականացված կոռուպցիոն ռիսկերը, ինչպես նաև իրականացվել են լրացուցիչ փորձագիտական հարցազրույցներ՝ գնահատման ընթացքում բացահայտված ռիսկերի, դրանց առաջացման պատճառների և հնարավոր կառավարման միջոցների առավել համապարփակ գնահատումն ապահովելու նպատակով:

Ներկայումս ավարտական փուլում են փորձագիտական հարցազրույցների արդյունքների ամփոփման և գնահատման զեկույցների վերջնական խմբագրման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը շարունակել է կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության գործնական կիրառման ուղղությամբ իրականացվող աշխատանքները՝ համագործակցելով «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» Էստոնիայի և Էստոնիայի միջազգային զարգացման կենտրոնի հետ:

Համագործակցության շրջանակում մեկնարկել է տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեթոդաբանության կիրառման փորձնական ծրագիրը, որի նպատակն է փորձարկել մշակված մեթոդաբանական մոտեցումների և գնահատման գործիքակազմի կիրառելիությունը համայնքային կառավարման համակարգում, բացահայտել դրանց կատարելագործման հնարավոր ուղղությունները և նպաստել տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման միասնական մոտեցումների ձևավորմանը:

Ծրագրի շրջանակում, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության առաջարկությամբ, ընտրվել են Հայաստանի Հանրապետության հինգ համայնքներ՝ Գյումրի, Վաղարշապատ, Անի, Սիսիան և Փարաքար: Ընտրված համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ իրականացվել են կարողությունների զարգացման միջոցառումներ՝ ուղղված կոռուպցիոն ռիսկերի գնահատման, հանրային բարեվարքության սկզբունքների և դրանց կիրառման գործնական մոտեցումների վերաբերյալ գիտելիքների և հմտությունների զարգացմանը:

Ծրագրի շրջանակում Թրանսփարենսի Ինթերնեշնլի հայաստանյան գործընկերների հետ համագործակցությամբ տեղայնացվել է ԵՄ տարբեր երկրներում կիրառված «Հանրային բարեվարքությունը տեղական ինքնակառավարման ոլորտում» հարցաշարը: Հարցաշարը լրամշակվել է՝ հաշվի առնելով հանրային բարեվարքության ոլորտում եվրոպական լավագույն փորձը և նպատակ ունենալով գնահատելու համայնքային մակարդակում բարեվարքության սկզբունքների ամրագրման, կիրառման և ապահովման առկա մեխանիզմները:

Փորձնական ծրագրի շրջանակում 2026 թվականի հունիսի 22-23-ին Երևանում անցկացվել է «Ռիսկից դեպի բարեվարքություն. ամրապնդելով տեղական ինքնակառավարումը Հայաստանում» թեմայով երկօրյա աշխատաժողովը (ավելի մանրամասն տե՛ս կրթական միջոցառումների [բաժնում](#)):

2026 թվականի առաջին կիսամյակում իրականացված աշխատանքների արդյունքում շարունակվել է Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգի ձևավորման ինստիտուցիոնալ, իրավական և մեթոդաբանական հիմքերի ամրապնդումը:

Իրականացված աշխատանքները հիմք են ստեղծում Հանձնաժողովին օրենքով վերապահված նոր լիազորությունների լիարժեք իրականացման, հանրային իշխանության մարմիններում և օրենքով սահմանված կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման միասնական համակարգի ներդրման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի կառավարման, բարեվարքության, թափանցիկության և հաշվետվողականության առավել արդյունավետ մեխանիզմների ձևավորման համար:

8. ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱԶԵԿՈՒՄ

Հաշվի առնելով, որ կոռուպցիայի կանխարգելման արդյունավետությունը մեծապես կախված է հանրային գիտակցության մակարդակից՝ Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է թիրախային կրթական ծրագրեր,

որոնք ուղղված են հակակոռուպցիոն արժեքների տարածմանը, բարեվարքության սկզբունքների ներդրմանը և կոռուպցիոն ռիսկերի նկատմամբ հասարակական անհանդուրժողականության ձևավորմանը:

Ստորև ներկայացված են այն կրթական և իրազեկման միջոցառումները, որոնք իրականացվել են համագործակցության տարբեր ձևաչափերով՝ ներառելով ինչպես պետական, այնպես էլ կրթական և քաղաքացիական հասարակության հատվածները: Այս գործընթացը միտված է ապահովելու համակարգային փոփոխություններ, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի և պաշտոնատար անձ կգիտակցի իր դերը կոռուպցիայի կանխարգելման գործընթացում:

8.1 Կոռուպցիայի կանխարգելմանը միտված կրթական ծրագրերը և համագործակցային շրջանակը

Հաշվետու ժամանակահատվածում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը տարբեր թիրախային խմբերի հետ անցկացրել է կրթական և իրազեկման միջոցառումներ, վերապատրաստման դասընթացներ, իրականացրել կրթական ձեռնարկների, ուղեցույցների և դասընթացների մշակման աշխատանքներ: Այսպես.

2026 թվականի [մարտի 10-13-ը](#) կայացել է «ՀՀ կորպորատիվ կառավարման կանոնագրքի ներդրումը պետական մասնակցությամբ ընկերություններում» թեմայով վերապատրաստումը, որը կազմակերպվել էր Կորպորատիվ կառավարման կենտրոնի, Միջազգային մասնավոր ձեռնարկատիրության կենտրոնի, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի և Պետական գույքի կառավարման կոմիտեի համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն էր բարձրացնել պետական մասնակցությամբ ընկերությունների իրազեկվածությունը կանոնագրքի ներդրման շարժառիթների և առավելությունների, ինչպես նաև դրա հիմնարար սկզբունքների վերաբերյալ:

Վերապատրաստմանը մասնակցել են պետական մասնակցությամբ ընկերությունների և պետական կառավարման մարմինների շուրջ 60 ներկայացուցիչներ՝ ներառյալ խորհրդի և գործադիր մարմինների անդամներ, կորպորատիվ քարտուղարներ և ոլորտի այլ պատասխանատուներ:

2026 թվականի [ապրիլի 18-ին](#) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը ՆԳ նախարարության հետ համատեղ կազմակերպել է «Գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրումը» խորագրով դասընթաց, որին մասնակցել են ՆԳ նախարարության շուրջ 300 ոստիկաններ, փրկարարներ և հանրային ծառայողներ:

Դասընթացի ընթացքում մասնակիցները բարձրացրել են հայտարարագրման գործընթացին վերաբերող հարցեր, որոնց շուրջ կազմակերպվել են քննարկումներ և տրվել սպառիչ պատասխաններ:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը և Կորպորատիվ կառավարման կենտրոնը, շարունակելով համագործակցությունը պետական մասնակցությամբ ընկերություններում բարեվարքության, թափանցիկության և հաշվետվողականության բարձր չափանիշների խթանման ուղղությամբ, [սալիի 10-ին](#) կազմակերպել են «Կոռուպցիոն ռիսկերի գնահատումը պետական մասնակցությամբ ընկերություններում» խորագրով սեմինար:

Սեմինարի մասնակիցներին ներկայացվել են ընկերություններում կոռուպցիայի կանխարգելման ժամանակակից մոտեցումները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով հակակոռուպցիոն ծրագրերի ձևավորմանը և կոռուպցիոն ռիսկերի գնահատմանը:

[Մայիսի 21-ին և 22-ին](#) «Հայաստանում տնտեսական հանցագործությունների արդյունավետ կանխարգելման և դրանց դեմ պայքարի ազգային կարողությունների հզորացում» ծրագրի շրջանակներում Հանձնաժողովը՝ Եվրոպայի խորհրդի (ԵԽ) աջակցությամբ և ԵԽ հայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ, իրականացրել է երկօրյա վերապատրաստման դասընթաց հանրային իշխանության մարմինների բարեվարքության հարցերով կազմակերպիչների համար՝ «Հանրային ծառայողների նկատմամբ կիրառելի բարեվարքության տարրերը» թեմայով:

Դասընթացին մասնակցել են բարեվարքության հարցերով 39 կազմակերպիչներ, ինչպես նաև Հանձնաժողովի աշխատակիցներ:

[Հունիսի 22-23-ը](#) Երևանում անցկացվել է «Ռիսկից դեպի բարեվարքություն. ամրապնդելով տեղական ինքնակառավարումը Հայաստանում» թեմայով երկօրյա աշխատաժողով, որը կազմակերպվել էր «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի և Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համագործակցությամբ:

Աշխատաժողովին մասնակցել են տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, ինչպես նաև փորձագետներ Հայաստանից և Էստոնիայից: Միջոցառման ընթացքում քննարկվել են տեղական ինքնակառավարման համակարգում կոռուպցիոն ռիսկերի բացահայտման, գնահատման և կանխարգելման մոտեցումները, ներկայացվել է միջազգային փորձը, ինչպես նաև անդրադարձ է կատարվել տեղական ինքնակառավարման գործընթացներում բարեվարքության, թափանցիկության և հաշվետվողականության ամրապնդման կարևորությանը:

Աշխատաժողովի շրջանակում ներկայացվել են տեղական ինքնակառավարման մարմիններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման

մեթոդաբանական մոտեցումները, ինչպես նաև քննարկվել են դրանց կիրառման գործնական առանձնահատկությունները:

Էլեկտրոնային ուսուցման հարթակ - Միաժամանակ, հաշվետու տարում Հանձնաժողովը շարունակել է հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների շարունակական վերապատրաստումն ու կարողությունների զարգացումը Հանձնաժողովի Էլեկտրոնային ուսուցման հարթակի միջոցով (այսուհետ՝ Ուսուցման հարթակ): 2025 թվականի ավարտին Ուսուցման հարթակում արդեն իսկ գրանցված է եղել շուրջ 10,000 անձ: 2026 թվականի առաջին կիսամյակի ընթացքում հարթակում գրանցված անձանց թիվը 2025 թվականի տարեվերջի ցուցանիշի համեմատ աճել է շուրջ 1500-ով: Նոր գրանցվածների շարքում են նախարարի տեղակալներ, նախարարի խորհրդականներ, վարչական ղեկավարներ, մարզպետի խորհրդականներ, գլխավոր քարտուղարներ և նրանց տեղակալներ, ինչպես նաև բարեվարքության հարցերով կազմակերպիչներ:

2026 թվականի հունիսի 30-ի դրությամբ հարթակում հասանելի 5 թեմատիկ դասընթացներից գրանցվել են հետևյալ արդյունքները՝

- «Էթիկական կառավարումը և կոռուպցիայի կանխարգելումը հանրային պաշտոն զբաղեցնող անձանց համար» դասընթացը հաջողությամբ ավարտել է 1,050 մասնակից,
- «Շահերի բախումը որպես բարեվարքության համակարգի տարր» դասընթացը՝ 1,175 մասնակից,
- «Գործարար բարեվարքությունը և կոռուպցիոն ռիսկերի կառավարումը պետական մասնակցությամբ ընկերություններում» դասընթացը՝ 1,162 մասնակից,
- «Կոռուպցիա. կանխարգելման հիմնադրույթները» դասընթացը՝ 1,128 մասնակից,
- Կուսակցությունների ֆինանսավորման համակարգը ՀՀ-ում» դասընթացը՝ 1,107 մասնակից:

Աշխատանքներ են տարվում նաև հանրակրթական դպրոցների մանկավարժական աշխատողների համար նախատեսված վերապատրաստման դասընթացի մոդուլների մշակման և հարթակում տեղադրման ուղղությամբ:

Հարթակ հնարավոր է մուտք գործել՝ սեղմելով Հանձնաժողովի կայքում գետեղված «Հակակոռուպցիոն կրթություն» կոճակը: Էլեկտրոնային ուսուցման հարթակը գործում է հետևյալ հղումով՝ <https://elearning.cpcarmenia.am/>:

Հանձնաժողովի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ոչ ֆորմալ կրթական ծրագրեր՝ Երևան քաղաքի և մարզերի բուհերի, ՄԿՈՒ և հանրակրթական ուսումնական հաստատությունների սովորողների, հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժների և

դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողների, դասախոսների և տարբեր ՔՀԿ ներկայացուցիչների հետ՝ ճանաչողական այցեր կազմակերպելով Հանձնաժողով, ինչպես նաև այցելելով որոշ կրթական հաստատություններ: Այսպես.

«Մանկավարժների և ծնողների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում» խորագրով հանդիպումների շրջանակներում, հաշվետու ժամանակահատվածում, Հանձնաժողովն իրականացրել է թվով 4 միջոցառում՝ [Երևանի](#) 13 և [մարզերի](#) 17 միջնակարգ և ավագ դպրոցների մանկավարժների և դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողների հետ, որոնց մասնակցել են 119 մանկավարժներ և ծնողներ: Հանդիպումների ընթացքում մասնակիցները ծանոթացել են կոռուպցիայի տեսակներին, դրսևորումներին, կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգին, Հանձնաժողովի գործառույթներին և լիազորությունների շրջանակին:

Հանձնաժողովը մեծապես կարևորում է կոռուպցիայի կանխարգելման գործում երիտասարդության գիտելիքների զարգացումը՝ ձգտելով հասարակության մեջ ձևավորել կոռուպցիայի նկատմամբ «զրո հանդուրժողականություն»: Հանձնաժողովը մշտապես ձեռնարկում է քայլեր՝ սովորողների համար անհրաժեշտ կրթական միջավայր ապահովելու և կոռուպցիոն երևույթները բացահայտելու ու կանխելու հմտություններով նրանց զինելու ուղղությամբ:

- [Փետրվարի 16-20-ը](#) և [մարտի 4-17-ը](#) Հանձնաժողովն իրագեկման հանդիպումներ է անցկացրել Արդարադատության նախարարության կողմից կազմակերպված «Կոռուպցիան իմ աչքերով» մրցույթի լավագույն տասնյակում ընդգրկված թվով 9 դպրոցների սաների հետ: Հանդիպումներն իրականացվել են ինտերակտիվ մեթոդաբանությամբ՝ խթանելով սովորողների անմիջական ներգրավվածությունը գործընթացին: Քննարկումների առանցքում են եղել կոռուպցիայի վերաբերյալ աշակերտների ընկալումներն ու առաջարկությունները, ինչպես նաև նախապես մշակված իրավիճակների գործնական վերլուծությունը:
- [Փետրվարի 27-ին](#) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը հյուրընկալել է Լեոնանիստի միջնակարգ և Հրազդանի N1 ավագ դպրոցների հակակոռուպցիոն խմբակի աշակերտներին:
- [Մարտի 10-ին](#), ճանաչողական այցի շրջանակներում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովում հյուրընկալվել են «ՕՀԱՆՅԱՆ» կրթահամալիրի սաները՝ ծանոթանալու Հանձնաժողովի գործունեությանն ու հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղություններին:
- Մարտի 18-ին Հանձնաժողովում անցկացվել է իրագեկման հանդիպում Հրազդանի թիվ 10 ա/դ աշակերտների հետ:
- [Ապրիլի 9-ին](#) «Շիրակացու ճեմարան» միջազգային գիտակրթական համալիրում անցկացվել է իրագեկման միջոցառում համալիրի սաների մասնակցությամբ:

- [Ապրիլի 14-ին](#) Երևանի թիվ 184 դպրոցում անցկացվել է հանդիպում դպրոցի հակակոռուպցիոն ակումբի աշակերտների հետ: Ակումբի սաները ներկայացրել են կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ իրազեկումների նպատակով իրենց պատրաստած նյութերը:
- [Հունիսի 29-ին](#) Ալավերդու թիվ 5 ավագ դպրոցում անցկացվել է «Երիտասարդների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում» թեմայով իրազեկման հանդիպում Ալավերդու թիվ 5 ավագ դպրոցի 10-12-րդ դասարանների աշակերտների հետ: Հանդիպման ընթացքում սովորողներին ներկայացվել են Հանձնաժողովի գործառույթները, կոռուպցիայի դրսևորումները և երիտասարդների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում:

Հանդիպումների ընթացքում Հանձնաժողովի աշխատակիցները մասնակիցներին ծանոթացրել են Հանձնաժողովի գործունեությանն ու հակակոռուպցիոն քաղաքականության հիմնական ուղղություններին: Աշակերտներն ինտերակտիվ խաղերի միջոցով ծանոթացել են «կոռուպցիա» հասկացությանը, դրա տարբեր դրսևորումներին և առաջարկել կանխարգելման լուծումներ՝ հիմնված բարեվարքության և արդարության սկզբունքների վրա:

[Փետրվարի 23-ին](#) Հանձնաժողովում հյուրընկալվել էին Երևանի պետական համալսարանի մանկավարժության և կրթության զարգացման կենտրոնի բակալավրիատի «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրի ուսանողները, իսկ [մարտի 13-ին](#)՝ Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողները,

[Ապրիլի 8-ին](#) Հանձնաժողովը, հերթական քննարկումներն է անցկացրել «Արովյանի բազմագործառութային պետական քոլեջ»-ի ուսանողների հետ,

[Ապրիլի 13-ին](#) Հանձնաժողովն իրազեկման հանդիպում է անցկացրել «Լիբերալ քաղաքականության դպրոց»-ի ուսանողների հետ:

[Մայիսի 8-ին](#)՝ Վանաձորի պետական համալսարանում, Հանձնաժողովն անցկացրել է հերթական իրազեկման հանդիպումը, որին մասնակցել են բուհի առաջին և երկրորդ կուրսի թվով 50 ուսանողներ:

Հանդիպումների ընթացքում ուսանողներին համապարփակ կերպով ներկայացվել է Հանձնաժողովի լիազորությունների և հանձնառությունների շրջանակը՝ մասնավորապես անդրադառնալով հայտարարագրման համակարգին, բարեվարքության ուսումնասիրության գործընթացին, բարեվարքության համակարգի տարրերին, կուսակցությունների ֆինանսավորման առանձնահատկություններին, կոռուպցիոն ռիսկերի գնահատման մեխանիզմներին, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ուղղությամբ իրականացվող ծրագրերին, ինչպես նաև Հանձնաժողովի գործունեության այլ առանցքային ուղղություններին:

Հաշվետու ժամանակաշրջանում, մասնագիտական կրթության ոլորտում հակակոռուպցիոն կրթական ծրագրերի իրականացման շրջանակներում, Հանձնաժողովի կողմից կազմակերպվել են «Հակակոռուպցիոն կրթությունը ՄԿՈՒ ոլորտում» թեմայով եռօրյա վերապատրաստումներ ՄԿՈՒ հաստատությունների դասախոսների հետ՝

- 2026 թվականի [մարտի 25-27-ին](#) Երևանի հայ-հունական քոլեջում, Երևան քաղաքի 15 ՄԿՈՒ հաստատությունների 29 դասախոսների հետ,
- 2026 թվականի [մայիսի 6-8-ը](#) Վանաձոր քաղաքում՝ Լոռու մարզի 12 ՄԿՈՒ հաստատությունների 30 դասախոսների հետ:

Վերը նշված հանդիպումների նպատակն էր դասախոսներին ծանոթացնել Հանձնաժողովի կողմից մշակված, «Հակակոռուպցիոն կրթությունը ՄԿՈՒ ոլորտում» ձեռնարկի կառուցվածքին, թեմաներին, առաջարկվող գործիքներին և մեթոդներին, ինչպես նաև գիտելիքների ամփոփման նպատակով նախատեսվող մասնակցային, իրավիճակային և դերային խաղերի անցկացման մեթոդներին:

Հանդիպումները կազմակերպվել են Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) հետ համագործակցությամբ:


Հաշվի առնելով ՔՀԿ ներկայացուցիչների դերը կոռուպցիայի կանխարգելման գործում՝ [մարտի 5-ին](#) տեղի է ունեցել «Կոռուպցիայի կանխարգելման կարևորությունը և ԿԿՀ-ի դերը» խորագրով հերթական հանդիպումը՝ ՔՀԿ թվով 14 ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանդիպումը կազմակերպվել էր նախապես իրականացված կարիքի գնահատման արդյունքների հիման վրա, ինչը հնարավորություն տվեց առավել արդյունավետ կերպով անդրադառնալ մասնակիցների ակնկալիքներին, ինչպես նաև ապահովել նպատակային և գործնական քննարկումներ:

Հանդիպման ընթացքում մասնակիցները ծանոթացել են կոռուպցիոն ռիսկերի գնահատման համակարգին, մեթոդաբանությանը, ինչպես նաև Հանձնաժողովի կողմից իրականացված հակակոռուպցիոն կրթական և իրազեկման ծրագրերին ու դրանց շրջանակներում նախատեսվող նոր նախաձեռնություններին:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են աշխատանքները, հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժների համար նախատեսված՝ «Կոռուպցիայի կանխարգելում և բարեվարքություն» ուսուցչի մեթոդական ուղեցույցի մշակման ուղղությամբ, որը նախատեսված է Հակակոռուպցիոն խթանների ղեկավարների և դասղեկների համար՝ որպես հակակոռուպցիոն կրթության իրականացման գործիք:

Այսպիսով, 2026 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում Հանձնաժողովի կողմից կազմակերպված և Հանձնաժողովի աշխատակիցների մասնակցությամբ անցկացված հանդիպումներին և միջոցառումներին մասնակցություն են ունեցել Երևան քաղաքի և մարզերի 30 դպրոցների 119 մանկավարժներ և ծնողներ, բուհերի, ՄԿՈՒ

հաստատությունների և դպրոցների 412 ուսանողներ և աշակերտներ, ՄԿՈԻ հաստատությունների 59 դասախոսներ, ՔՀԿ 14 ներկայացուցիչներ, շուրջ 450 հանրային ծառայողներ, ինչպես նաև էլեկտրոնային ուսուցման (E-learning) հարթակով վերապատրաստում անցած 1,465 հանրային ծառայողներ:



8.2 Հանրային իրազեկացածության բարձրացմանն ուղղված ծրագրեր, հաղորդակցություն


Կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի կարևոր նախապայմաններից է հանրային իրազեկվածության բարձրացումն ու կոռուպցիոն երևույթների նկատմամբ անհանդուրժողականության մշակույթի ձևավորումը: Այս համատեքստում հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը շարունակել է հանրային իրազեկման ծրագրերի իրականացումը՝ ընդգրկելով հանրության լայն շրջանակների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության և մասնագիտական համայնքների ներկայացուցիչների:

Միաժամանակ, Հանձնաժողովը հետևողական աշխատանքներ է իրականացրել տեղեկատվության հասանելիության և հրապարակայնության ապահովման, ինչպես նաև հանրության հետ բաց, թափանցիկ և արդյունավետ հաղորդակցության

զարգացման ուղղությամբ՝ նպաստելով հանրային վստահության բարձրացմանն ու հաշվետվողական ամրապնդմանը:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովն ապահովել է իր գործունեության շարունակական և համակարգված լուսաբանումը՝ պաշտոնական կայքէջում, ինչպես նաև Ֆեյսբուք և Լինքդին սոցիալական հարթակներում պարբերաբար հրապարակելով տեղեկատվական և վերլուծական բնույթի նյութեր: Հրապարակումներում ներկայացվել են Հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունները, իրականացված նախաձեռնություններն ու միջոցառումները: Հանրային իրազեկման ծրագրերի շրջանակներում, Հանձնաժողովը պարբերաբար հրապարակել է նաև ինֆոգրաֆիկաներ, տեսանյութեր, որոնց միջոցով հանրությանը ներկայացվել են գործունեության հիմնական արդյունքները:

Ստորև ներկայացված են հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովի կայքէջում, Ֆեյսբուքյան և Լինքդինյան էջերում հրապարակված նյութերի վերաբերյալ տվյալները.



Ըստ գծապատկերի, 2026 թ.-ի առաջին կիսամյակի ընթացքում Հանձնաժողովի կայքէջում հրապարակվել է 70 հոդված, 125 որոշում և եզրակացություն, Ֆեյսբուքյան էջում՝ 107, իսկ Լինքդինյան էջում 81 հրապարակում:

Հանձնաժողովը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է նաև պաշտոնական կայքէջի արդիականացման աշխատանքներ՝ համաձայն ՀՀ կառավարության 2026 թվականի փետրվարի 12-ի N 153-Ն որոշմամբ սահմանված պահանջների: Նոր պաշտոնական կայքէջը համապատասխանեցվել է սահմանված տեխնիկական, ոճական, կառուցվածքային և տեղեկատվական անվտանգության պահանջներին, որի գործարկումը նախատեսվում է իրականացնել առաջիկայում:

Հանձնաժողովը շարունակել է ակտիվ գործունեություն ծավալել հանրային իրազեկման, կրթական և մասնագիտական կարողությունների զարգացման ուղղություններով՝ կազմակերպելով տարբեր միջոցառումներ, վերապատրաստումներ, աշխատաժողովներ և իրազեկման արշավներ: Միաժամանակ Հանձնաժողովը հյուրընկալել է միջազգային կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության կառույցների և գործընկեր հաստատությունների ներկայացուցիչների: Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են մասնագիտական վերապատրաստումների, իրականացրել կրթական հանդիպումներ միջին և ավագ դպրոցների աշակերտների համար, ինչպես նաև մասնակցել միջազգային հանդիպումների և ուսումնական այցերի (Նշված միջոցառումների և նախաձեռնությունների վերաբերյալ տեղեկատվությունը հասանելի է Հանձնաժողովի պաշտոնական կայքէջում՝ cpcarmenia.am):

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը շարունակել է նաև սերտ համագործակցությունը լրատվամիջոցների հետ, կազմակերպել է մի շարք հարցազրույցներ, քննարկումներ: Բացի այդ, օրական երկանգամյա պարբերականությամբ իրականացվել է շուրջ 60 լրատվամիջոցների մամուլի մշտադիտարկում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ լրատվամիջոցների հրապարակումները ևս կարող են վարույթ հարուցելու հիմք հանդիսանալ, եթե պարունակում են կոնկրետ անձի կողմից անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, վարքագծի կանոնների խախտումների կամ շահերի բախման իրավիճակների առերևույթ խախտման հատկանիշներ, ինչպես նաև կարող են հիմք հանդիսանալ նաև հայտարարագրերի ստուգման և վերլուծության համար:

Հանձնաժողովը շարունակելու է հետևողականորեն ընդլայնել կրթական ծրագրերի շրջանակը՝ ապահովելով հակակոռուպցիոն միջոցառումների շարունակականությունն ու արդյունավետությունը:

9. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՅՈՒՄ

Հանձնաժողովը 2026 թվականի հաշվետու կիսամյակում շարունակել է բարելավել Հանձնաժողովի հայտարարագրման էլեկտրոնային համակարգը և կուսակցությունների ֆինանսական հաշվետվությունների հարթակը: Աշխատանքներն ուղղված են եղել պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների կողմից ներկայացվող հայտարարագրերի, ինչպես նաև կուսակցությունների տարեկան ֆինանսական հաշվետվությունների ներկայացման

գործընթացում անգգուշության հետևանքով թույլ տրվող սխալների և ոչ ամբողջական տվյալների ներկայացման դեպքերի նվազագույնի հասցնելուն:

Հանձնաժողովը հաշվետու տարվա ընթացքում «Հայաստանի տեղեկատվական համակարգերի գործակալություն» հիմնադրամի, հետագայում արդեն՝ Տեղեկատվական համակարգերի կարգավորման հանձնաժողովի աջակցությամբ աշխատանքներ է տարել Հանձնաժողովի պաշտոնական կայքը ՀՀ կառավարության 2026 թվականի փետրվարի 12-ի թիվ 153-Ն որոշմանը համապատասխանեցնելու ուղղությամբ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի ապրիլի 2-ի N 401-Ն և N 436-Ն որոշումների՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին տրամադրվել են թվայնացման գործընթացների իրականացման համար անհրաժեշտ բյուջետային հատկացումները:

Միայն դրանից հետո Հանձնաժողովը հնարավորություն է ստացել ձեռնամուխ լինելու թվայնացման գործընթացների իրականացմանը:

Արդյունքում, 2026 թվականի մայիսից մեկնարկել են թվայնացման աշխատանքները հետևյալ հիմնական ուղղություններով՝

- Բարելավքության հարցաթերթիկների թվայնացում, որի իրականացման արդյունքում, հարցաթերթիկները միացված կլինեն փոխգործելիության հարթակին, և հնարավոր կլինի վերաբերելի տվյալները ներբեռնել համապատասխան պետական էլեկտրոնային շտեմարաններից, ինչպես նաև կստեղծվի համապատասխան տվյալների փոխանցման հնարավորություն բարելավքության հարցաթերթիկների և հայտարարագրերի միջև:
- Հայտարարագրերի հրապարակային ռեեստրի կառուցվածքի փոփոխություն, թվայնացման այս հատվածի իրականացման արդյունքում հայտարարագրման ռեեստրում ամբողջությամբ կարտացոլվեն հայտարարատու պաշտոնատար անձանց ընտանեկան կապերը:
- 2011–2021 թվականների հայտարարագրերի միգրացիա, վերջինիս իրականացման արդյունքում հայտարարագրման հին համակարգից ամբողջական ֆունկցիոնալությամբ նոր համակարգ կտեղափոխվեն 2011-2021 թվականների պաշտոնատար անձանց և նրանց ընտանիքի անդամների կողմից ներկայացված հայտարարագրերը:

Բացի այդ, 2026 թվականի հունիսից մեկնարկել է նաև նվերների հաշվառման ռեեստրի թվայնացման գործընթացը:

Վերոնշյալ բոլոր ուղղություններով իրականացվող աշխատանքների ամբողջական ավարտը նախատեսվում է 2026 թվականի դեկտեմբերին:

Հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են «Արհեստական բանականությունը և կոռուպցիայի կանխարգելումը» թեմայով ինտերակտիվ աշխատաժողովին, որը կազմակերպվել էր Ֆոլկե Բեռնադոտ ակադեմիայի (FBA) և Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) հետ համագործակցությամբ: Աշխատաժողովի ընթացքում ներկայացվել են տեղեկատվական միջավայրի և ժողովրդավարական գործընթացների վրա արհեստական բանականության ազդեցությանը, կուսակցությունների մեղիա ծախսերի մշտադիտարկմանը, ինչպես նաև ակտիվների արժեքի վերլուծության և ապօրինի հարստացման հնարավոր դեպքերի բացահայտմանն ուղղված գործիքակազմերը: Քննարկվել են նաև արհեստական բանականությամբ ստեղծված բովանդակության հետ կապված ռիսկերը և դրանց հնարավոր հետևանքները՝ շեշտադրելով, որ այդ ռիսկերի արդյունավետ կառավարումը պահանջում է ոչ միայն տեխնիկական լուծումներ, այլև ինստիտուցիոնալ մեխանիզմների շարունակական ամրապնդում:

Բացի վերոնշյալը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի աշխատակիցները մասնակցել են «Բիզնես և Կրթություն Ասոցիացիայի» կողմից կազմակերպված «Արհեստական բանականությունը կազմակերպություններում» քառօրյա ինտենսիվ վերապատրաստմանը: Վերապատրաստման ընթացքում մասնակիցները ծանոթացել են գեներատիվ արհեստական բանականության հնարավորություններին, դրա կիրառման առանձնահատկություններին և սահմանափակումներին, ինչպես նաև տեքստերի և տվյալների վերլուծության, մուլտիմեդիա բովանդակության գեներացման և փաստաթղթերի ուսումնասիրման գործիքներին: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել պաշտոնական հաղորդակցության և արդյունավետ հրահանգների (prompt) ձևակերպման սկզբունքներին, ինչպես նաև աշխատանքային գործընթացների քարտեզագրմանն ու արհեստական բանականության կիրառմամբ դրանց թվայնացման և արդյունավետության բարձրացման գործնական լուծումների մշակմանը:

10. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի հաշվետու տարվա ընթացքում Հանձնաժողովը՝ շարունակելով համագործակցությունը միջազգային գործընկերների հետ, ունեցել է մի շարք հանդիպումներ, որոնցից մի քանիսը ներկայացվում է ստորև.

- Հանձնաժողովում են հյուրընկալվել Եվրոպայում Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության (ԵԱՀԿ) Ժողովրդավարական

հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) ընտրական կարիքների գնահատման առաքելությունը: Հանդիպման ընթացքում ներկայացվել են քաղաքական ֆինանսավորման վերահսկողության մեխանիզմները, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ կուսակցությունների ֆինանսավորման շրջանակներում գործառույթները, ինչպես նաև Ազգային ժողովի՝ 2021 և գալիք՝ 2026 թվականի ընտրությունների ընթացքում կիրառվող օրենսդրական կարգավորումների տարբերությունները:

- Հանձնաժողովը հյուրընկալել է Եվրոպայի խորհրդի Երևանյան գրասենյակի ղեկավար Մաքսիմ Լոնգանգեին: Հանդիպման ընթացքում քննարկվել են երկկողմ և բազմակողմ համագործակցության շրջանակներում իրականացված ծրագրերը, ինչպես նաև Հանձնաժողովի առաջնահերթությունները և դրանց շրջանակներում հետագա համագործակցության հնարավորությունները: Անդրադարձ է կատարվել Հանձնաժողովի գործունեության ոլորտներում վերջին տարիներին արձանագրված մի շարք ձեռքբերումներին, մասնավորապես՝ կուսակցությունների ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողության, բարեվարքության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման, հանրային պաշտոն զբաղեցնող անձանց կողմից բարեվարքության համակարգի տարրերի պահպանմանը հետևելու գործառույթների իրացման ոլորտներում:
- Հանձնաժողովը հանդիպում է ունեցել ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի դիտորդական պատվիրակության ղեկավար Եվրոսիմա Պեյովիչի գլխավորած պատվիրակության հետ, որի ընթացքում անդրադարձ է կատարվել կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկության մեխանիզմներին, ինչպես նաև հանրային պաշտոն զբաղեցնող անձանց բարեվարքության ապահովմանն ուղղված գործիքակազմի և ինստիտուցիոնալ մեխանիզմների վերաբերյալ:
- Ընտրական համակարգերի միջազգային հաստատության (IFES) նախագահ Էնթոնի Բանբուրիին և վերջինիս գլխավորած պատվիրակության ներկայացուցիչները հյուրընկալվել են Հանձնաժողովում: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել երկկողմ համագործակցության շրջանակներում իրականացվող աշխատանքներին, ինչպես նաև նախանշել հետագա փոխգործակցության հնարավոր ուղղությունները: Անդրադարձ է կատարվել նաև կուսակցությունների ֆինանսավորման թափանցիկությանն ու հաշվետվողականությանն առնչվող օրենսդրական կարգավորումներին:
- Հանձնաժողովում հյուրընկալվել են Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության դիտորդական առաքելությունը, որի ընթացքում

ներկայացուցիչներին մանրամասն ներկայացվել են քաղաքական ֆինանսավորման գործող համակարգը և դրա վերահսկողության մեխանիզմները, պարզաբանվել են մինչև մայիս ամիսն իրականացվող ֆինանսավորման առանձնահատկությունները, կուսակցությունների ֆինանսական միջոցների գոյացման աղբյուրներին վերաբերող պահանջները, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված ծախսերի և նվիրատվությունների սահմանաչափերը:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը միջազգային գործընկերների կողմից կազմակերպված մի շարք հանդիպումների է մասնակցել, այդ թվում՝

- Վարչավա քաղաքում (Լեհաստանի Հանրապետություն)՝ Լեհաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարության կողմից՝ Եվրոպական արտաքին գործողությունների ծառայության (EEAS) և Հիբրիդային սպառնալիքներին դիմակայելու Եվրոպական գերազանցության կենտրոնի (Hybrid CoE) աջակցությամբ կազմակերպված՝ «Վարչավայի՝ օտարերկրյա տեղեկատվական մանիպուլյացիայի և միջամտության հակազդման համաժողով և գործնական վարժանք» խորագրով համաժողովին: Համաժողովի ընթացքում Հանձնաժողովի ներկայացուցիչը հանդես է եկել ելույթով «Ապօրինի դրամական հոսքերը՝ որպես ընտրություններին միջամտության գործիք» պանելային քննարկման շրջանակներում՝ ներկայացնելով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործառույթները, մասնավորապես՝ կուսակցությունների ֆինանսական գործունեության վերահսկողության համատեքստում, ինչպես նաև ներկայացրել է այդ գործառույթի շրջանակներում արձանագրված հիմնական մարտահրավերները, պատասխանել է մասնակիցների հարցերին:
- Քիշնևում քաղաքում (Մոլդովայի Հանրապետություն) կազմակերպված Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության «Partnership for Good Governance» (PGG III) ծրագրի շրջանակում «Ընտրությունների ամբողջականություն. ժողովրդավարական հետընթացի կանխարգելում և դիմակայունության բարձրացում՝ ապօրինի ֆինանսական հոսքերի բացահայտման միջոցով» թեմայով աշխատաժողովին, որի ընթացքում քննարկվել են ընտրական գործընթացներում կոռուպցիոն, փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման ռիսկերը, քաղաքական ֆինանսավորման թափանցիկության միջազգային չափանիշները, շրջանցման մեխանիզմները, ինչպես նաև թվային գործիքների և կրիպտոակտիվների կիրառման հետ կապված մարտահրավերները:

Հաշվետու ժամանակահատվածում Հանձնաժողովը մասնակցել է Ստրասբուրգ քաղաքում (Ֆրանսիայի Հանրապետություն) կազմակերպված Եվրոպայի խորհրդի

Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) 103-րդ լիազումար նիստին: Նիստի ընթացքում քննարկվել և հաստատվել է ԳՐԵԿՈ-ի հինգերորդ գնահատման փուլի՝ «Կոռուպցիայի կանխարգելումը և բարեվարքության խթանումը իշխանության կենտրոնական մարմիններում (բարձրագույն, գործադիր և իրավապահ մարմիններում)» Հայաստանի համապատասխանության զեկույցը, ինչպես նաև ընդգծվել է Հանձնաժողովի կողմից իրականացված աշխատանքների արդյունքում գրանցված առաջընթացը՝ գործադիր իշխանության ներկայացուցիչների (PTEFs) բարեվարքության ուսումնասիրության գործիքակազմի և վարքագծի կանոնագրքի ներդրման, կիրարկման և այդ ուղղությամբ պաշտոնատար անձանց իրազեկվածության բարձրացման, հակակոռուպցիոն կրթության, շահերի բախման կառուցակարգերի կիրառման ուղղությամբ:

Բացի այդ, Հանձնաժողովը մասնակցել է Արտաքին գործերի նախարարությունում՝ Հայաստան-Եվրոպայի Խորհուրդ 2023-2026թթ. Գործողությունների ծրագրի միջգերատեսչական կոմիտեի ամփոփիչ նիստին, ինչպես նաև ՀՀ-ԵՄ 2027-2030թթ. հաջորդ Գործողությունների ծրագրի մշակելու համար բարձր մակարդակի մտքերի փոխանակմանը: Նիստին անդրադարձ է կատարվել վերոնշյալ համագործակցության շրջանակներում հանրային ծառայությունում բարեվարքության միջավայրի հաստատմանն ուղղված համատեղ ջանքերին, Եվրոպայի խորհրդի աջակցությամբ կոռուպցիայի կանխարգելման ոլորտում համատեղ վեր հանված օրենսդրական խնդիրներին և դրանց լուծման ուղղությամբ իրականացված աշխատանքներին: